№ 151 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՅՈՒԼԻՍԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՅՈՒԼԻՍԻ № 151

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները՝ ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«ՄՇԱԿԻ» ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ կազմած
ՍԱՍՈՒՆԻ ՔԱՐՏԷԶԸ
փոքրադիր: Հատը 5 կոպէկ: Ճանապարհածախքով հատը 8 կ. Գումարով գնողներին զեղչ

Ախալցխայի հայոց Կարապետեան տղայոց աւանդվող ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ համար հարկաւոր է մասնագիտական պատրաստութեամբ
ՈՒՍՈՒՑԻՉ:
Տեսականապէս և գործնականապէս աւանդվում են այգեգործութիւն, պտղաբուծութիւն, բանջարաբուծութիւն (ունի նաև ջերմոց) և մեղուաբուծութիւն: Պայմանների մասին դիմել հոգաբարձութեան:
առ. (19,25) 458. 3—1

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկ. օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասսիստ. պրոֆ. Պօզնէրի:
Նախկին տարիների նման կընդունէ հիւանդներին մայիսի 1-ից Կովկասի հանքային ջրերում՝ Պեատիգորսկում, Ելիզավետինսկայա փողոց, տուն Արխիպովի, ռուսաց սոբորի դիմաց, տէլէֆ. № 276:
առ. (Ն. Հ. Կ.) 248. 30—29

ՇԻՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» այսօրվայ համարում զետեղում ենք Կովկասի փոխարքայի շրջաբերականը ուղղված տեղական նահանգապետներին՝ շինական հասարակութիւնների վերակազմութեան առիթով:

Այդ շրջաբերականում առաջ են բերված այն մի քանի կէտերը, որոնք գալիս են լրացնելու նոյն խնդրի առիթով պետական Հիմնական Օրէնքների 87-րդ յօդուածի կարգով հրատարակված գիւղական ժողովների կազմակերպութեան վերաբերեալ կանոնները, որոնց նպատակն է Անդրկովկասում եղած շինական հասարակութիւնների կազմակերպութեանը տալ վոլոստնոյ կազմակերպութիւն, ինչպիսին Ռուսաստանումն է:

Ռուսաստանում, ինչպէս յայտնի է, մի քանի գիւղերից բաղկացած մի ամբողջ խմբակցութիւն կազմում է վոլոստ, որը հնարաւորութիւն է տալիս այդ միացեալ գիւղերին համայնական գործակցութեամբ բաւարարելու իրանց այնպիսի կարիքները, որպիսին ամեն մի գիւղ՝ առանձին-առանձին վերցրած՝ անկարող կը լինէր սեփական միջոցներով, օրինակ, պահել դպրոց, հիւանդանոց, բժիշկ, դեղատուն, գիւղատնտես, անց կացնել խճուղիներ, շինել առուներ, կամուրջներ և այլն: Ուրիշ խօսքով՝ բաւարարել զեմստվային անհրաժեշտ պահանջները:

Այդպիսի պայմանների մէջ լայն ասպարէզ է բացված գիւղական ինքնագործունէութեան ու փոխադարձ ինքնօգնութեան համար:

Եւ եթէ հէնց բուն Ռուսաստանում վոլոստնոյ կազմակերպութիւնը չէ տուել շինական տարրին ցանկալի արդիւնքը, պատճառը պէտք է փնտռել տիրող րէժիմի յամառութեան, ադմինիստրացիայի միջամտութեան և ոստիկանական ակնապիշ կոնտրոլի մէջ, որի շնորհիւ վոլոստնոյ կազմակերպութիւնը հասարակական ինքնավար հաստատութիւնից դարձել է ադմինիստրացիայի անբաժան գործօններից մէկը ի վնաս ազգաբնակութեան:

Մեզանում՝ Անդրկովկասում՝ վերջին տարիներս մտցված է հասարակական կազմակերպութեան մի ձև, որը բաւականին նման է վոլոստնոյին. տարբերութիւնը միայն նրանումն է, որ վերջինս երկաստիճան կազմակերպութիւն է. գիւղերը վոլոստնոյ ժողովներին մասնակցում են իրանց ներկայացուցիչներով, մինչ մեզանում կայ միայն մի ընդհանուր ժողով, որին մասնակցում են հասարակութեան մէջ մտնող բոլոր տնատէրերը առանց ներկայացուցիչների, ու այդպիսով ստեղծվել է մի բարդ մեխանիզմ: Նոր օրէնքը մեր մէջ էլ այդ բարդ ու քարացած մեխանիզմի փոխարէն մտցնելու է երկաստիճան կազմակերպութեան նպատակայարմար ձևը: Եւ, ինչպէս երևում է փոխարքայի շրջաբերականից, վոլոստնոյ կազմակերպութեանը մտադրութիւն կայ տալու աւելի ընդարձակ հնարաւորութիւն զեմստվային ինքնագործունէութեան համար:

Այդ հնարաւորութիւնը, ինչպէս և ազգաբնակութեան շահերը իր սըրտին մօտ ընդունելը ադմինիստրացիային թելադրվում է երկրի բարձր իշխանութեան կողմից:

Որքան կարևոր է շինական հասարակութիւնների վերակազմութեան այս նոր բարենորոգումը, որպէս ստեղծումն զեմստվային մանր միութեան, նոյնքան նշանակալից է և այդ թելադրանքը բարձր իշխանութիւնից:

Թողնելով մեր առելիքը շրջաբերականի մի քանի կէտերի վերաբերմամբ մի այլ անգամի, այժմ մենք մի ցանկութիւն միայն կարող ենք յայտնել, որ գաւառական ադմինիստրացիայի կազմի մէջ այսուհետև գոնէ տեղ չունենան այնպիսի անձինք, որոնք իրանց կրթական ցենզով, անցեալ գործունէութեամբ ու վերաբերմունքով դէպի ժողովուրդը՝ անհամապատասխան են իրանց նոր կոչմանը:

Գործի աջողութեան համար դա է առաջին երաշխաւորութիւնը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 յուլիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յուլիսի 10-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր և մեր հետախոյզ զօրախմբերը աջող գործողութիւններ ունեցան:

Օլթիի ուղղութեամբ՝ Թէվայի շրջանում հրացանաձգութիւն էր:

Մուշի ուղղութեամբ թիւրքերը, ստանալով օգնութիւն, յարձակումներ են գործում Կոպ-Գէլ-Բաշի զօրաճակատում:

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ:

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԱՏՈՐՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—12 յուլիսի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև ծովում մեր ականնաւերը Բոսֆորի շրջանում ռմբակոծեցին թիւրքական հեծելազօրի բանակին, կորուստներ պատճառեցին թշնամուն և պայթումներ առաջ բերին նրա սայլատար վաշտերի մէջ:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Ռուսաց ականնաւերը ջրասուզեցին թշնամու 2 առագաստանաւ, որոնք քարածուխ էին տանում դէպի Բոսֆոր:

ԱՆԳԼՕ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 յուլիսի

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն հաղորդում է. «Ադէնի այն կողմում գտնվող Շէյկօտման քաղաքը, որտեղից բրիտանական զօրքերը վերջերս հեռացել էին, չորեքշաբթի օրը նորից գրաւեցին նրանք: Թիւրքաց զօրքերը վանվեցին հեշտութեամբ և հալածվեցին 8 կիլոմետր տարածութեամբ: Մենք կորցրինք 25 մարդ: Մենք ամրացրել ենք Շէյկօտմանը. խաղաղ ազգաբնակութիւնը վերադարձել է քաղաք:

«Թիւրքերը դիմադրում են Լահաջէում, բայց տատանվում են հիւանդութիւններից»:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԷԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

10—12 յուլիսի

ՍՕԼՈՒՆ.— Մուդրոս կղզուց տեղե[illegible] պօլի զօրաճակատում երէկ վերսկսվեց կատաղի ճակատամարտ: Անգլօ-ֆրանսիական զօրքերը եռանդով յարձակումներ են գործում թշնամու վրա և տոկունութեամբ առաջանում են:

ՍՕԼՈՒՆ.—Երէկ Մուդրոսում կայացաւ ծովապետների խորհրդակցութիւնը:

Միտիլենից հաղորդում են, որ դաշնակից նաւատորմը Ադրամիտի ծոցում ռմբակոծեց մի քանի պահակադիրք և ցրեց ծովափի մօտ կենտրոնացած թիւրքաց զօրքերին:

Մի հակաականնաւ ռմբակոծեց Ավլիտալիի զօրանոցները:

ԼՕՆԴՕՆ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. «Երէկ թիւրքերը յարձակում գործեցին մեր ձախ զօրաթևի հիւսիսային խրամատների վրա: Մեր զօրաճակատի խրամատներից մենք բացինք ուժեղ կրակ յարձակվողների դէմ: Թիւրք զօրքերի մի մասը թնդանօթային կրակի պաշտպանութեան տակ մօտեցաւ մեր առաջին խրամատներին. մեր 2 գնդակացիրից կրակ բացվեց, որին թշնամին չը դիմացաւ և նահանջեց, թողնելով մեր ռազմաճակատի առաջ 50 դիակ. Հնարաւոր է, որ աւելի հեռաւոր տեղերում կան այլ սպանվածներ, որովհետև մեր կրակի գործողութիւնը սպանիչ էր: Ամբողջ գործը տևեց 20 րոպէ»:

ԱԹԷՆՔ.—Միտիլենից հաղորդում են, որ ճակատամարտը Գալիպօլի թերակղզում վերսկսվեց մեծ սաստկութեամբ: Դաշնակիցներն յաղթական կերպով առաջանում են. ըստ լուրերի՝ նրանք գրաւել են Մայդոսը և ձեռք են ձգել շատ գերիներ:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—12 յուլիսի

ՍՕԼՈՒՆ. — Համաձայն վիճակագրական պաշտօնական տուեալների, Թիւրքական և Բուլղարական Թրակիայից նաև Փոքր-Ասիայից աքսորված յոյների թիւը հասնում է 107,922 մարդու: Փախստականները ապաստանել են Մակեդոնիայում: Նրանց թողած գոյքը գնահատվում է 358 միլիոն ֆրանկից աւելի: Բացի այդ փախստականներից, մօտ 140,000 հոգի էլ արտաքսված են Արշիպելագոսի կղզիները և Յունաստանի համարեա բոլոր քաղաքները:

ԱԹԷՆՔ.—Թիւրքաց միսիան Աթէնքի լրագիրներում յայտարարութիւն է տպել, որի մէջ ասված է, թէ Մարմարա ծովից և Այվալըքից քրիստոնեաները աքսորվում են ռազմագիտական նկատումներով և այն երկիւղից, թէ մի գուցէ նրանք վառելանիւթ և մթերքներ հայթայթեն դաշնակիցների սուզանաւերին: «Պատրիս» լրագիրը այդ յայտարարութիւնը համարում է անվստահութեան արտայայտութիւն յոյն ազգաբնակութեանը, որ ներկայումս յուզված է գերմանացիների դրդմամբ կատարվող սիստեմատիկ հալածանքներից:

ՀՌՈՄ.—Ստոյգ աղբիւրից հաղորդում են, որ իտալական կառավարութիւնը Կ. Պոլսում եռանդուն առաջադրութիւն է արել, որի հետևանքում Բ. Դուռը պէտք է բաւարարէ իտալական բոլոր պահանջները կամ թէ յարաբերութիւնները երկու պետութիւնների միջև կը խզվեն պաշտօնապէս:

ՀՌՈՄ.—«Տրիբունա» և «Իդէա Նացիոնալէ» լրագիրներին հաղորդուել են, որ թիւրքաց իշխանութիւնները կամայականօրէն գրաւել են մի իտալահպատակի պատկանեալ մի նաւ Ղալաթիա նաւահանգստում: Այժմ այդ նաւը թիւրքերը աշխատեցնում են Մարմարա ծովում զինուորական նպատակների համար: Չը նայած իտալական դեսպանատան բողոքին, Բ. Դուռը ոչ մի բացատրութիւն չը տուեց և ցանկութիւն չը յայտնեց հատուցանելու նաւատիրոջը վնասների փոխարէն: «Տրիբունան» ճշգում է նաև այն տեղեկութիւնը, թէ Թիւրքիայում ճնշումներ են գործադրվում Իտալիա վերադարձող իտալացիների վերաբերութեամբ, ինչպէս նաև այն, որ թիւրք-գերմանական մամուլը սպառնական տոն է գործածում Իտալիայի հասցէին: Կ. Պօլսի իտալական դեսպանը բողոքել է մամուլի այդպիսի վերաբերմունքի դէմ: «Եթէ երիտասարդ-թիւրքերը,—ասում է լրագիրը,—կամենում են նոր դժբաղդութիւն ստեղծել իրանց երկրի համար, յարձակվելով Իտալիայի վրա, նրանք կարող են ընտրել աւելի կարճ ճանապարհ այդ նպատակին հասնելու համար»:

«Ջիօրնալէ դ'Իտալիան» և «Իդէա Նացիոնալէն» ստացել են տեղեկութիւն Կանիբէից, որ թիւրքական մի առագաստանաւով 30 թիւրք և գերմանացի զինված օֆիցեր ափ են իջել Սօլումի և Տօբրուկի միջև և ռազմամթերքներով դիմել են դէպի Կիրենաիկի. «Այդպիսով,—ասում է «Ջիօրնալէ դ'Իտալիան»,—մասնաւոր տեղեկութիւնները ճշգում են այն տեղեկութիւնը, որ Թիւրքիան բացէ ի բաց հանդէս է եկել ընդդէմ Իտալիայի»:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը լիազօրել է Պ. Հ. Գ. բացատրել, որ յիրաւի օսմանեան կառավարութիւնը վերջերս պահանջեց համաձայնութեան պետութիւնների պաշտօնեաներին մեկնել Կ. Պոլսից: Բացառութիւն եղաւ միմիայն Կ. Պոլսի մեր գեներալ-հիւպատոսարանի պաշտօնեաների մէկի համար, որին թոյլատրված է շարունակել բնակվել օսմանեան մայրաքաղաքում, մնալով իտալական դեսպանատան մէջ: Այդ հանգամանքով էլ բացատրվում է այն, որ Մէհմէդ-Ալիին թոյլատրված է մնալ Պետրոգրադում:

ՍՕԼՈՒՆ.—Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Երուսաղէմի նահանգապետ Ջէմալ փաշան յայտնել է, որ Պաղեստինում հրէական գաղթականութիւնը պէտք է վերջանայ, որովհետև նրա պահպանումը առաջ կը բերէ Թիւրքիայի համար այն հետևանքները, որոնց պատճառով ստեղծվեց բալկանեան դաշնակցութիւնը: Նահանգապետը նկատել է, որ Բ. Դուռը համակարծիք է իր հետ:

ՕԴԵՍՍԱ.— Կ. Պոլսից հաղորդում են. «Պրինց Հօհենլօէի թողած առաջին տպաւորութիւնը օսմանեան մայրաքաղաքի պաշտօնական շրջաններում աննպաստ եղաւ. Նրա անծանօթութիւնը շրջապատող կացութեան և գործերի հետ կապված է առաջ բերում, թէ Գերմանիան ինչ-որ մտադրութիւն ունի Թիւրքիայի նկատմամբ: Ցանկութիւն է զգացվում Թիւրքիային դնել վասալ ստրկութեան վիճակի մէջ և կառավարել գերման օֆիցերների ձեռքով պրինց Հօհենլօէի գլխաւորութեամբ:

(Լրագիրներից)

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ թիւրք պատգամաւորները հասնելով Շվէյցարիա՝ հող են պատրաստում հաշտութեան բանակցութիւնների համար:

◆ Սև ծովը ներկայումս, «Р. Сл.»-ի ասելով, ոչ միայն ապահովված է թիւրքական նաւատորմի յարձակումներից, այլ մենք ինքներս կարող ենք հարուած հասցնել թըշնամուն:

◆ Արաբական շէյխերը զօրախմբեր են կազմակերպում Գալիպօլիի զօրքի պաշտպանութեան համար:

◆ Նախկին սուլթան-Համիդը ծանր տկարացել է:

◆ Բեռլինում պաշտօնավարող թիւրքաց դեսպանը կանչվում է Կ. Պոլիս. Նրա տեղ նշանակվում է նախկին մեծ վէզիր Հակկը-փաշան:

◆ Ստոյգ աղբիւրներից բղխող տեղեկութիւնների համաձայն, մինչև օրս Մարմարայի ծովափից աքսորվել են 60000 յոյներ:

◆ Աթէնքից հեռագրում են «Н. В.»-ին, որ դաշնակից զօրքերը գրաւել են թիւրքական մի քանի խրամատ Ագրիբաբայի շրջանում:

◆ «К. С.»-ի թղթակիցը հեռագրում է, որ Կօպ-Կամուրջ զօրաճակատում գեներալներ Վ.-ի և Ն.-ի զօրաբանակների հետ առանձնապէս աչքի ընկաւ գեներալ Շ-ի հեծելազօրը, որ մինչ այդ հսկայական թիկնանց շարժում էր կատարել անանցանելի լեռնային կիրճերով և յունիսի 17-ին Ախլաթի մօտի կռւում անակնկալ երևաց թիւրքերի դէմ:

◆ «К. Сл.»-ին հեռագրում են, որ թիւրքաց զօրքի թիկունքում, Մուշի շրջանում, զարգանում է հայկական ապստամբութիւն:

◆ «Secolo»-ի Պետրոգրադի թղթակիցը հաղորդել է իր լրագրին, որ արտաքին գործերի մինիստր Սազոնովը իրան հետևեալ յայտարարութիւնն է արել այն մասին, թէ ինչպիսի քաղաքականութիւն ունի Ռուսաստանը Յունաստանի վերաբերմամբ:

— Սև-ծովը ռուսական ծով է, և Ռուսաստանը չէ կարող թոյլ տալ, որպէսզի մի բարբարոս երկիր, ինչպիսին Թիւրքիան է, իր ձեռքում պահէ այդ ծովի մուտքի բանալին, ուրեմն և տնօրինէ ռուսական առևտրի վիճակը: Ռուսաստանը այլևս չէ կամենում, որպէսզի իրան փակեն: Մենք ար[illegible] լի փականքից, և այդ այժմ պէտք է վերջանայ: Մեզ հարկաւոր է, որպէսզի մեր տան դռները բաց լինեն, երբ այդ կամենում ենք մենք, իսկ այդ մենք միշտ էլ կը կամենանք, որովհետև այդ մեր օգուտն է: Բուլղարիան և Ռումինիան առիթ չունեն վախենալու, որովհետև Բոսֆորը և Դարդանէլը ռուսաց ձեռքերում ինքնին երաշխիք են նաւարկութեան կանոնաւորութեան ու ապահովութեան:

◆ Բեռլինում կայացել է կարևոր խորհրդակցութիւն Թիւրքիայի գործերի առիթով: Գեներալ ֆօն-Սանդէրսը յայտնել է, որ դրութիւնը Թիւրքիայում անյուսալի է. Թիւրքերը գայրացած են գերմանացիների դէմ, անհրաժեշտ է ուղարկել ռազմամթերք:

◆ Բուխարէստից յայտնում են, որ Գալիպօլի թերակղզում թիւրքերի մէջ խոլերա կայ:

◆ Ռումինիայի վրայով այս օրերս Թիւրքիա մտան 3500 ձեռքի ռումբ:

◆ Պարիզում նորից խօսվում է սուլթանի մահվան մասին:

◆ «Р. В.»-ին հաղորդում է, որ Թիւրքիան նորից զօրքեր է ուղարկում Ադրիանուպոլիս:

◆ «Р. Сл.»-ն հաղորդում է, որ թիւրքերը զօրքերը հանում են Փոքր-Ասիայից. Անատօլիայի ծովափը մնում է անպաշտպան:

◆ «Р. В.»-ն հաղորդում է, որ Կ. Պոլիս է հասել ամերիկեան մի յանձնաժողով՝ հայերի վրա գործադրված գազանութիւնները քննելու համար:

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

I

(Վեհ. Կաթողիկոսի՝ 1915 յուլիսի 4-ին ստացած պաշտօնական նամակից քաղուածք)

...Թիւրքիոյ հայութիւնը դարերէ ի վեր չտեսնուած տագնապ կանցնէ այժմ. համիդական շրջանին սուսեր բերող շրջանի մը մէջ կը գտնուինք. բանտարկութիւնք, կողոպուտք, գիւղերու աւերում, սպանութիւնք հայաբնակ բոլոր գաւառներու մէջ, և ընդհանուր մեծ կոտորածներու փոխարէն ընդհանուր տարագրումներ:

Ապրիլի սկիզբը Վանայ դէպքը տեղի ունեցաւ, որ առիթ բռնելով կառավարութիւնը քաղաքին հայ տները ռմբակոծելով 300 տունի չափ մոխիր դարձուց և 5—600 մարդ սպաննեց: Քիչ յետոյ տեղի ունեցաւ այդ քաղաքին ռուսական գրաւումը:

«Ապրիլ 10-էն ետքը կառավարութեան քաղաքականութեան փոփոխումին և հայոց հանդէպ ի գործ դրուած խստութեանց պատճառը՝ Վանայ մէջ հայոց այդպիսի ընթացք ունենալն է»—

պատասխանատուները մինիստրներէն։ Այդ Թուականին կեդրոնէն տրուած հրամանի մը վրայ Թիւրքիոյ ամեն կողմը խուզարկուեցան բազմաթիւ հայոց տուներ, չխնայելով նոյն իսկ առաջնորդարան, եկեղեցի և վարժարան։ Հազարաւոր անձեր ձերբակալուեցան, զէնք, վնասակար գիրք, պատկեր և այլն ունենալուն պատճառաւ։ Ասկէ զատ առանց որևէ յանցանքի գրեթէ ամեն քաղաքէ և գիւղէ բռնաբար, վայրեր ուղարկուեցան հազարաւոր երևելի հայեր, եկեղեցականներ, մտաւորականներ, հարուստներ և կուսակցականներ, կամ անոնց հետ շփում ունեցող անհատներ։ Կ. Պոլսէն 250-է աւելի անձեր աքսորուեցան Զանդըրի (Կասթեմունի նահանգ) և Այաշ (Գաղատիա), բայց գաւառներուն աքսորականները չափազանց շատ են թուով, Կ. Պոլսոյ հետ բաղդատելով։ Ասիկա որոշ ծրագրի մը արդիւնք է։ Հայութիւնը նախ զինաթափ ընել և գլխաւորները աքսորելով անհաբեկել, ապա ազգը ամբողջովին փճացնել։ 20—45 տարեկաններն արդէն զէնքի տակ են, միւսներն այս կերպով չէզոքացնելէ յետոյ մնացած կիներուն և փոքրիկներուն գլխուն եղեռնագործութիւն մը խաղալ։ Այս եղեռնագործութիւնը կամ դժոխային ծրագիրը հետևեալն է.—Հայկական խնդիրը միանգամայն ընդմիշտ վերջացնելու համար հայաբնակ վեց նահանգներուն և Կիլիկիոյ հայութիւնը մեծ մասամբ դէպի հարաւ փոխադրել, Միջագետքի այն մասը, որ կը գտնուի Հալէպի և Մուսուլի միջև, և ուր կը բնակին այժմ արաբ և քիւրդ աշիրեթներ։ Այս ծրագիրը գործադրելու պաշտօն ունեցող յանձնաժողովն արդէն ընտրուած ու ճամբայ ելած է և կը կարծենք թէ, եթէ ժողովուրդին տեղափոխութիւնը չէ սկսած տակաւին, շատ քիչ օրէն պիտի սկսի, թէև կը կարծենք, թէ Վանայ ոչ գրաւեալ տեղերուն և Բաղէշի հայ բնակչութիւնը սկսած են արդէն ճամբայ հանել։ Այլ և երևակայեցէք թէ ինչ պիտի ըլլայ անոնց վիճակը, քանի որ ոչ միայն իրենց կալուածները պիտի ձգեն, այլ և իրենց ցանքերն և բոլոր գոյքերը։ Անշուշտ քանի մը ամսուան մէջ պիտի կոտորուին անօթութեան և անընտել կլիմայի երեսէն։ Օրինակը մեր աչքին առջև է արդէն՝ Զէյթունի շրջակայից հայութիւնը, ինչպէս անշուշտ իմացած էք, այժմ ամբողջովին տեղափոխուած է, մէկ մասը Համամէ (իբր 1000 ընտանիք) Կոնիայի Սուլթանիէ գիւղաքաղաքը, ուր կը մնան այսօր մերկ, անօթի, անպատսպար։ Տեղը ճախճախուտ ըլլալով, համաճարակ հիւանդութիւնք արդէն բռնկած են կոտորածներ ընել անոնց մէջ։ Անոնց հետ յարաբերութեան մտնելու կամ անոնց օգնութիւն հասցնելու համար եղած բոլոր դիմումներն անլսելի կը մնան ցարդ Թիւրք կառավարութենէն, իսկ անոնց գիւղերն ու կալուածներն արդէն սկսած են յանձնուիլ իսլամներու, յատուկ յանձնաժողովի մը ձեռամբ։

II

Կիլիկիայի հայերի վիճակը

Ալէքսանդրիայից (Եգիպտոս) յունիսի 18-ից գրված մի մասնաւոր նամակից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

...Գալով մեզ հետաքրքրող հայկական հարցին, վերջերս շատ տխրալի լուրեր հասան այստեղ Կիլիկիայի մասին։ Ամբողջ Զէյթունը բնաջինջ է եղել իր շրջականերով, նոյնպէս Դէօրտ-Եօլը. բոլոր բնակիչները, մինչև 20,000 հոգի, իրանց բնակավայրից հեռացվել են զանազան հեռու տեղեր՝ կանայք առանձին, այր մարդիկ առանձին և երեխաները առանձին. այնպէս որ՝ նրանք բոլորովին բնաջինջ պիտի լինեն. հաւանական է, որ մինչև տեղ հասնելը՝ ճանապարհին Թիւրքերը նրանց պիտի կոտորեն իրանց սովորականին համեմատ։

Այս լուրերը ճշգրիտ են, որովհետև իտալական հիւպատոսները, որոնք նախորդ օրը այստեղ հասան Հալէպից և Ադանայից, իրանք պատմեցին, նոյնպէս և ամերիկացի միսիօնարները. նրանք բացորոշ կերպով յայտնում են, որ բարգաւաճ Կիլիկիան բոլորովին քարուքանդ եղաւ և մի տխուր պատկեր է ներկայացնում ներկայիս։ Թիւրքը, որ ինքը յայտնապէս քանդվում է, հայերին էլ կամենում է բնաջինջ անել. Տեսնենք այս դէպքում պետութիւնները ինչ պիտի անեն։ Արդէն նրանց յայտարարված է այս բոլորի մասին։

Նոյն վիճակի մէջ է գտնվում Դիարբեքիրի, Ուրֆայի, Մարտինի և այլ տեղերի հայութիւնը։

ՀԱՅԿ. 6 ՐԴ ԴՐՈՒԺԻՆԱՅԻ ՎԻՐԱՒՈՐՆԵՐԸ

Վիրաւորվել են յունիսի 16-ին.—Կոնդեան Սիմէօն՝ վիրաւորված ուսից, Գրիգորեան Սահակ՝ վիր. ազդրից, Բաղդասարեան Մակար՝ վիր. գլխից (մեռած), Ղալամքարեան Լեոն՝ վիր. ձախ ազդրից։

Յունիսի 17 ին.—Աբրահամեան Միսակ՝ վիր. աջ ազդրից, Կրասուլեան Իվան՝ վիր. ծնկից, Հովսէփեան Փիլիպպոս՝ վիր. ազդրից, Ղազարեան Դոմիս՝ վիր. մէջքից, Յովհաննիսեան Յովհաննէս՝ վիր. ազդրից, Ղազարեան Հմայեակ՝ վիրաւորված ծանր, Սաֆարեան Եղիազար՝ վիր. գլխից թեթև, Տէր Կարապետեան Սեդրակ՝ վիր. ձախ ծնկից, Մամադասեան Սարգիս՝ վիր. ձախ ձեռքից, Սահակեան Աբրահամ՝ վիր. ձախ ուսից, Մարտիրոսեան Տրդատ՝ վիր. աջ ուսից (շրապնէլ), Դաւթեան Մանուկ՝ վիր. աջ ազդրից, Աղաբէկեան Նիկոլայ՝ վիր. կրծքից (թեթև), Սոլովեան Տիխոն՝ վիր. աջ ուսից (փշրված), Գրիգորեան Մելքոն՝ [illegible] բոս՝ վիր. աջ ազդրից, Բալովեան Հմայեակ՝ վիր. ձախ թևից, Յարութիւնեան Աբրահամ՝ վիր. կրծքից, Շանչուկ Նիկիտ՝ վիր. ձախ դաստակից, Կալաճեան Խաչատուր՝ վիր. աջ ուսից, Մանուկեան Սանասար՝ վիր. աջ ծնկից, Սալբէքեան Խաչատուր՝ վիր. կրծքից (թեթև), Մելիք-Առաքելեան Արշակ՝ վիր. աջ ուսից, Տէրտէրեան Վալատ՝ վիր. ձախ ծլից, Աբրահամեան Սամսոն՝ վիր. ձախ ազդրից, Կարապետեան Յովհաննէս՝ վիր. ձախ դաստակից, Գրիգորեան Թորոս՝ վիր. կրծքից (ծանր), Սիւաշեան Լևոն՝ վիր. ոտների ցած մասից, Խաչատրեան Եղիազար՝ վիր. ձախ թևից, Շէվչէնկօ Ալէքսանդր՝ վիր. ձախ ուսից, Մուրադեան Պետրոս՝ վիր. ձախ ուսից, Մելքոնեան Մելիքսէդ՝ վիր. գլխից (ծանր), Մարկոսեան Մարկոս՝ վիր. ծնկներից։

Յունիսի 20-ին.—Բժշկեան Հայկ՝ վիր. աջ ձեռքից։

Յունիսի 22 ին.—Մխիթարեան Միսակ՝ վիր. վզից (ծանր), Յակոբեան Իսրայէլ՝ վիր. ձախ դաստակից, Նալբանդեան Սերոբ վիր. թևից։

Յունիսի 23-ին.—Սէրգէեվ Յակոբ՝ վիր. ոտից, Հանիսեան Հայրապետ՝ վիր. երկու ոտից, Դաւթեան Զաքար՝ վիր. թևից, Աբրահամեան Ալէքսան, վիր. աջ ուսից, Մարկով Սիմէօն՝ վիր. աջ ազդրից, Ժամկոչեան Հայկ՝ վիր. ձախ ոտքի թաթից, Համբարձումեան Սահակ՝ վիր. աջ ազդրից, Համբարձումեան Յարութիւն՝ վիր. ուսից, Բալոյեան Գաբրիէլ՝ վիր. բերանից (լեզուից), Վարդապետեան Նահապետ՝ վիր. ձախ ազդրից, Լուսիկեան Խարիտօն՝ վիր. ձախ ուսից՝ Ստեփանեան Կարապետ՝ վիր. աջ թևից, Կարապետեան Միսակ՝ վիր. աջ թևից, Կրըլյաէ Ֆեօդոր՝ գանգի մաշկը թեթև քերված, Կարպօ Կուրիլօ՝ սպանված, Աստուածատրեան Արմենակ՝ վիր. աջ ծնկից, Աւշարեան Գրիգոր՝ սպանված, Բժշկեան Հայկ՝ վիր. ճակատից (թեթև), Բախդարչուկ Մարկ՝ վիր. մէջքից (ծանր), Վէզէտեան Ստեփան՝ վիր. աջ ծնկից, Սերոբեան Մխիթար՝ վիր. ձախ ազդրից, Վարդանեան Հայրապետ՝ վիր. ձախ ոտքից, Սերոսեան Հայկ՝ վիր. վզից (թեթև), Քէչիչեան Միսակ՝ վիր. ձախ ոտքի թաթից, Մակարեան Նիկոլայ՝ վիր. ձախ ոտքից։

Սպանվածները.—Խաչիկ, Աւշարեան Գրիգոր, Բոյաճեան Արամ, Հախումեան Մամիկոն, Կարապետեան Մկրտիչ, Կուրիլով Կարպօ, Մակար, Բաղդասարեան Մակար (մեռած վէրքից)։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—о—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—12 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Միտավայի շրջանում յուլիսի 10-ին ռազմական ընդհարումներ չեղան։

Եանիշկի-Շավլի-Ռոսիէնի զօրաճակատից դէպի հարաւ թշնամին շարունակում է առաջանալ արևելեան ուղղութեամբ.

Նարեվի զօրաճակատում թշնամու յարձակումը Պիսսա գետի ձախ ափում, չը նայած որ կռւի մէջ գոր- [illegible] աջողութեամբ վանեցինք։ Թշնամին լարեց բոլոր ջանքերը, որպէսզի պաշարէ Նարեվը Ռոժանի-Պուլտուսկ ռազմավայրում։ Յուլիսի 10-ին այստեղ յամառ կռիւ էր։

Վիսլայի վրա էական փոփոխութիւններ չը կան։ Թշնամու մի քանի յարձակումները Նովօգէօրգիևսկի և Իվանգօրօդի առաջին դիրքերի դէմ՝ մենք վանեցինք։

Վիսլայի և Արևմտեան Բուգի միջև յուլիսի 10-ին Լիւբլինի ուղղութեամբ եռանդուն թնդանօթաձգութիւն էր. հակառակորդը փորձեց առաջանալ։

Ռաւէլ-Վօկալավիցէ զօրաճակատում յամառ կռիւներ են։ Մեր զօրքերը լոյս յուլիսի 10-ի գիշերը աջողութեամբ գործեցին բազմաթիւ հակայարձակումներ, որոնց ընթացքում նրանց աջողվում էր հասնել մինչև թշնամու դիրքերը. սակայն կռւի պայմանները թոյլ չէին տալիս հանել այդ դիրքերից թշնամու ձգած թնդանօթները։

Գրուբէշովի շրջանում թշնամին կենտրօնացրեց մեծաքանակ ույժեր, որոնց յամառ կռիւներից յետոյ աջողվեց առաջանալ դէպի հիւսիս։

Բուգի վրա Սօկալի շրջանում կռիւները յուլիսի 10-ին շարունակվեցին նախկին զօրաճակատի վրա. այստեղ թշնամին ստացել է նոր զօրամասեր։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Միտավայի շրջանում էական փոփոխութիւններ չը կան։

Շավէլի և Ռոսսիէնի մօտից սկսվող ճանապարհների վրա թշնամին շարունակում է առաջանալ ընդհանուր առմամբ դէպի Պոնեվէժ, որի և Լեվէնտա գետի շրջանում յուլիսի 11-ին կռիւներ էին։

Նարեվի ռազմաճակատում թշնամին յուլիսի 10-ի գիշերը և 11-ին մի շարք յամառ յարձակումներ էր գործում Պիսսա գետի աջ ափի երկարութեամբ Սէրվատսկի շրջանում, ուր նա աջողութիւն չունեցաւ և խոշոր կորուստներ կրեց։

Օստրօլէնկայի և Ռօժանի միջև մենք վանեցինք թշնամու խիզախ փորձերը՝ անցնելու մի քանի կէտում Նարեվը։

Ռօժանի-Պուլտուսկ ռազմավայրում թշնամին յուլիսի 10-ին կարողացաւ իր ույժերի մի մասը անցկացնել մինչև գետի ձախ ափը և աշխատում է այստեղ ամրանալ։

Վիսլայի ձախ ափում թշնամին յուլիսի 11-ին անաջող յարձակումներ էր գործում Պիասէչնօյի ուղղութեամբ։

Վիսլայի և Բուգի միջև հակառակորդը, ստիպված լինելով մեր հակայարձակումներից կանգ առնել, առաջացաւ սակ Գրուբէշովի ուղղութեամբ, ուր լոյս յուլիսի 11-ի գիշերը և հետևեալ օրը մեր զօրքերը վանեցին թշնամու յարձակումները Վօյսլավիցէ-Պորօցկօ ռազմաճակատում։

Բուգի, Զօլոտայա Լիպայի և Դնէստրի վրա ռազմական ընդհարումներ չեղան, բացի Դօբրօտովօ գիւղի մօտից, ուր զարգանում է արիւնահեղ կռիւ։

Բուգի աջ ափում թշնամին անկարող եղաւ ամրանալ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 յուլիսի

ՓԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

«Սուշէի մօտ գիշերով թնդանօթաձգութիւն էր, նոյնպէս Լեպրէտրի անտառում։ Վօգէզներում մենք ձեռք բերինք նոր աջողութիւններ։ Երէկ երեկոյեան Լաֆօնտէնի և «627» բլուրի միջև մենք գրաւեցինք գերմանական ամուր խրամատներ և մի շարք տներ Լէնուա գիւղում, ուր վերցրինք աւելի քան 700 գերի»։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

10—12 յուլիսի

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից հաղորդվում է.

Լոյս յուլիսի 9-ի գիշերը մեր դիրիժաբլներից մէկը ռումբեր ձգեց Նաբրէզինի մօտի երկաթուղագծի վրա։ Բոլոր ռումբերը պայթեցին շատ աջող։ Այդ տեսակ օդային արշաւանք մենք կատարեցինք անցեալ գիշեր Նաբրէզինի մօտ, ուր նետված ռումբերը հասան իրանց նպատակին։ Դիրիժաբլները վերադարձան երկու անգամն էլ անվնաս, թէև ենթարկվեցին հրացանաձգութեան և թնդանօթաձգութեան։

Այսօր թշնամին 5 ռազմանաւի օգնութեամբ ռմբակոծեց Օրտօնան և Տրէմիտի կղզին։ Օրտօնայում սպանվել են 1 ծերունի և մի 14 տարեկան տղայ։ Նիւթական վնասը խոշոր է։

Կարսօ շրջանում լոյս յուլիսի 9-ի գիշերը մի քանի անգամ յարձակումներ գործեց, բայց անաջող։ Առաւօտեան թշնամուն մօտեցան խոշոր օժանդակ գնդեր։ և թնդանօթային ուժեղ ռմբակոծութիւնից յետոյ նա խիտ զօրաշարքերով յարձակման դիմեց գլխաւորապէս մեր ձախ զօրաթևի դէմ։ Առաջին զօրագծի մեր զօրքերը, չը նայած նախկին կռիւներում կրած ծանր փորձութիւններին, պահեցին իրանց դիրքերը և վերջնականապէս կանգնեցրին թշնամու առաջխաղացումը։ Յետոյ մենք, ստանալով օգնութիւն, գործեցինք հակայարձակում, որից թշնամին լիակատար պարտութիւն կրեց։ Մենք գերեցինք 500 հոգի, որոնցից 76-ը օֆիցէր են։ Թշնամու կորուստներն ահագին են։

Իզօնցօ հովտում, ամբողջ ռազմաճակատով կռիւը շարունակվում է։ Մօնտենէրօ շրջանում, մեր ալպիական զօրքերը կանգնեցրին թշնամու առաջխաղացումը Լուցնէգի մօտ։ Մեզ աջողվեց թշնամուց խլել մի քանի դիրք, պատճառելով նրան ծանր կորուստներ և գերելով հարիւրաւոր մարդ։ Պլաւայի և Գորիցէի մօտ մեր աստիճանական առաջխաղացումը շարունակվում է։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են. «Մեր զօրքերը Կադորա շրջանում գրաւեցին Տօֆանը, վանելով թշնամու բոլոր թոյլ յարձակումները։ Մօնտենէրօ շրջանում մեր զօրքերն առաջանում են Լուցնիցա լեռնաշղթայի մօտով։ Իզօնցօ հովտում թշնամին իր գիշերային սովորական անաջող յարձակումների ժամանակ՝ փորձում էր արգելք լինել մեր բերդային աշխատանքներին, բայց ապարդիւն։ Կարսօյում թշնամին երէկ խոշոր ույժերով փորձեց մօտենալ մեր խրամատների աջ զօրագծին, բայց ստիպված էր նահանջել, կրելով խոշոր կորուստներ»։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

11 յուլիսի

ԼՈՆԴՈՆ.—Շվէդական «Կապէլլա» նաւը փայտ բերելիս ջրասուզվել է գերմանական սուզանաւից։ Նաւաստիներն ազատվել են։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—12 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը հաւանութիւն տուեց արտաքին գործերի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Ն. Կ. Մ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ

(Թիֆլիսի, Քութայիսի, Գանձակի, Բագուի, Երևանի և Սև ծովեան նահանգների նահանգապետներին)։

Անցեալ յունիսի 26-ին Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց սահմանել, ի փոփոխումն և ի լրումն պատշաճ օրէնքների, հետևեալ որոշումները.

«I. Թիֆլիսի, Քութայիսի, Գանձակի, Բագուի, Երևանի և Սև ծովեան նահանգներում (Օրէնք. ժողովածու. հատ. IX, Առանձին Յաւելուած, հրատ. 1902 թ., գիրք I, երես 397) գիւղական ժողովներին մասնակցելու իրաւունքը վերապահվում է գիւղական համայնքի կազմում եղած բոլոր տնատէրերին։

«II. Եթէ I բաժնում յիշված նահանգների մէջ գիւղական հասարակութիւնը բաղկացած է բազմամարդ գիւղից կամ մի քանի սակաւամարդ գիւղերից, գիւղական ժողովը կազմվում է, գիւղական (շինական) գործերի վերաբերեալ նահանգական առանձին որոշումներով, ընտրութեամբ նշանակված գիւղական պաշտօնավոր անձերից և գիւղական ժողովների կողմից, իւրաքանչիւր քսան ծխից մէկ հոգի, ընտրված գիւղացի-տնատէրերից։ Գիւղակներին, խուտորներին և այլ բնակավայրերին, որոնք ունեն քսանից պակաս ծուխ, իրաւունք է վերապահվում ուղարկել գիւղական ժողովին մասնակցելու մի-մի ընտրեալ։

«Այդ ընտրեալների լիազօրութիւնների ժամանակամիջոցը նշանակվում է երեք տարի այն պայմանով, որ իւրաքանչիւր տարի ընտրեալների մի-երրորդ մասը, հերթով, փոխարինվում է նոր ընտրեալներով։ Առաջին երկու տարին ընտրեալները հեռանում են վիճակով։ Հեռացողները կարող են նորից վերընտրվել։

«III. Բացի ընդհանուր կանոնների 411-րդ յօդուածում (Օրէնք. ժողով. հատ. IX, Առանձին Յաւելուած, գիրք I, հրատ. 1902 թ.) թուած գործերից, I բաժնում մատնանշված նահանգների մէջ մասնաւոր ժողովներում կարող են քննութեան առնվել որբերի խնամակալներ ու հոգաբարձուներ նշանակելու և նրանց գործողութիւնները ստուգելու վերաբերեալ, ինչպէս և փոքրահասակ գիւղացիներին (շինականներին) առանձին կամ չափահասների հետ միասին պատկանող կենսական մթերքների ու շուտ փչանալու և այլ վնասների ենթակայ իրեղէնների բաժանումն կատարելու թոյլտուութեան գործերը»։

Ներկայ օրէնքը Բարձրագոյնս հրատարակվեց տեղական գիւղական համայնական վարչութեան պակասութիւնների առիթով իմ ներկայացրած առաջադրութեան համաձայն։ Այդ առաջադրութեան մէջ ես մատնանշում էի, որ վարչական անհրաժեշտ պահանջները վաղուց է, ինչ դրդել են տեղական իշխանութիւններին անդրկովկասեան նահանգներում, ուր բուն Ռուսաստանից տարբեր, հիմնված էր մինչև այժմ միայն մի վարչական-տնտեսական միութիւն՝ շինական (ամեն մի գիւղում) հասարակութիւն, որի վրա դրված էին և վօլօստների (համայնքների) պարտականութիւնները (ֆունկցիաները)՝ ստեղծել գործնականում, օգտվելով օրէնքի թոյլտուութիւնից՝ սակաւամարդ գիւղերը միացնելու իրար հետ կազմելու մի շինական համայնք, երկաստիճան շինական վարչութիւն, այսինքն 1) իւրաքանչիւր առանձին գիւղում՝ իր վարչութիւնը, իբրև մի մասնաւոր (գիւղական) ժողով, գլուխ ունենալով հասարակական տանուտէրի օգնականին և 2) գիւղերի խմբաւորութիւն, երբեմն 30 և աւելի, միացած շինական հասարակութեան անուան տակ, մի ընդհանուր գիւղական ժողովի նման, գլուխ ունենալով հասարակական տանուտէրին, մի խմբաւորութիւն, որը իսկապէս ներկայացնում է իրանից այն, ինչ որ ներքին Ռուսաստանում կոչվում է վօլօստ։ Աւելի ուժեղ տնտեսական միութիւններ, քան առանձին գիւղական հասարակութիւններն են, ստեղծելու այդ եղանակով բաւարարվում էր սովորաբար աւելի գործունեայ և թանգ վարձատրվող հասարակական տանուտէրեր, գրագէտ գրագիրներ, հասարակական վարչութիւնների համար շէնք ունենալու և այլն պահանջները։

Կատարելով, համարեա, վօլօստնոյ (համայնական) ժողովի բոլոր ֆունկցիաները, գիւղական ժողովը անդրկովկասեան նահանգներում, սակայն, նախասահմանված լինելով, օրէնքով, մի գիւղի համար, մի ամբողջ խումբ գիւղեր գիւղական համայնք կազմելու համար իրար միացնելուց յետոյ, դարձաւ չափազանց բազմամարդ և սակաւ պիտանի իր պարտականութիւնները կատարելու համար։ Գիւղական համայնքի բոլոր տնատէրերի ընդհանուր ժողովը վաղուց է, ինչ տրտունջներ է առաջ բերել ոչ միայն ազգաբնակութեան մէջ, այլ և հէնց ադմինիստրացիայի իրա մէջ, որն, անհրաժեշտութիւնից դրդված, ստեղծել էր այդ բարդ ժողովը։ Վաղուց էր մատնանիշ արված այդ տեսակ ժողովներ գումարելու դժուարութիւնը, շատ յաճախ չեղեալ վճիռներ կազմելը, վճիռների տակ ստորագրութիւններ հաւաքելու գործը ի չարը գործադրելը։ Ինչպէս օրինակ ստորագրել էին տալիս՝ առանց ծանօթացնելու ստորագրողներին նրանց բովանդակութեան հետ, նոյնպէս և շեշտվում էր այն դժուարութիւնը, որ ծագում էր կայացած ժողովին ներկայ գտնվող իշխանաւորի առաջ, երբ նա ուզում էր պարզել, թէ մի քանի հարիւր հոգուց բաղկացած այդ բազմութիւնը ի՞նչ որոշում կայացրեց քննվող հարցի վերաբերմամբ և այլն։

Վերջին ժամանակներս, պատերազմի շնորհիւ, գիւղական ժողովի այդ պակասութիւնները Անդրկովկասում առանձնապէս սկսեցին զգալի դառնալ այն պատճառով, որ, այդ ծխերի վրա զինուորներին ու նրանց ընտանիքներին խնամելու մի շարք պարտականութիւններ դնելու հետ միասին, օրինական ժողով գումարելը աւելի ևս դժուարին դարձաւ շնորհիւ այն հանգամանքի, որ տնատէրերից շատերը, զօրահաւաքի միջոցով զօրքի շարքերը կանչված լինելով, բացակայում էին։ Բացի գիւղական ժողովի յիշեալ պակասութիւնից՝ նրա բազմամարդութիւնից, նա, չը նայելով վերջին դրութեան, մինչև այժմ ունէր և մի այլ պակասութիւն, այն, որ նրա վճիռներում շահագրգռված բոլոր տնատէրերը լիովին չէին ներկայացված, որովհետև, օրէնքով, չէին կարող մասնակցել այն տնատէրերը, որոնք կամերալի ցուցակների մէջ չէին մտնված։ Միևնոյն պակասութիւնը առանձնապէս զգալի էր լինում այն մասնաւոր ժողովներում, որոնք քննում էին գիւղում եղած առ հասարակ բոլոր տնատէրերի շահերը մօտիկ շօշափող գործերը։

Վերոյիշեալ նոր օրէնքը վերացնում է գիւղական ժողովի կազմակերպութեան մէջ նկատված այդ թերութիւնները, վերապահելով իրաւունք մասնակցելու ինչպէս ընդհանուր ժողովներին, նոյնպէս և մասնաւոր գիւղի մէջ եղած բոլոր ծուխերին անխտիր, միայն թէ չը թոյլատրելով նրանց մասնակցութիւնը ընդհանուր ժողովներին լոկ ընտրեալների միջոցով։ Միևնոյն ժամանակ, նոր օրէնքը, գիւղական դասին պատկանող խնամակալութեան յանձնված անձանց շահերի հոգատարութիւնից դրդված, թոյլատրում է նրանց գործերը փոխադրել մասնաւոր ժողովները և այդպիսով բաւականին թեթևացնում է հասարակական ընդհանուր ժողովների աշխատանքը։

Այսուհետև հասարակական ընդհանուր ժողովը, որբերի խնամակալութեան գործը իրանց տեղերում կանոնաւոր դրված լինելու դէպքում, տնօրինելու է միայն խնամակալութեան տակ դրված այնպիսի անձանց գործերը, որոնք մտնելով շինական հասարակութեան կազմի մէջ՝ այնուամենայնիւ չեն պատկանում այս կամ այն մասնաւոր գիւղական համայնքին, նրա սահմանների մէջ չեն մտնում։ Գիւղական խնամակալութեան գործի այդօրինակ կազմակերպութեան վրա պէտք է դարձված լինի գիւղական հասարակութիւնների ամենալուրջ ուշադրութիւնը։

Համաձայն նոր օրէնքի մեկնութիւնների՝ գիւղական ժողովի կազմի ու լիազօրութիւնը (կոմպետենցիան) բարեփոխելով կարելի է լիովին հաւատացած լինել, որ նա մեծ աջողութեամբ կը կատարէ վօլօստնոյ բնոյթ ունեցող իր բոլոր պարտականութիւնները։ Այնուամենայնիւ, գիւղական ինքնավարութեան գործում մեծարժէք բարելաւումն մտցնելու նպատակով անհրաժեշտ է մի շարք միջոցներ ձեռք առնել, վարչական կարգով արդէն, գործադրել սիստեմատիքաբար ու անշեղ և այն էլ առանձին վայրերի իսկական պահանջներին խիստ համապատասխան։ Այդպէս, նախ և առաջ, հարկաւոր է նկատի առնել, որ մինչև այժմ գիւղական հասարակութիւններ կազմելը, որոնց իդէալն էր, օրէնքով, հասարակութեան զուգադիպումը առանձին գիւղերին, վերևը յիշած պատճառներով ու նպատակներով, տեղի էր ունենում աւելի կամ պակաս չափով պատահաբար, կամ ունէր, առաւելապէս, վարչական կառավարութեան պահանջների հետ և երբեմն նոյնիսկ ի վնաս ազգաբնակութեան տնտեսական կարիքների ու նրա բարեկարգութեանը։ Դրանով է բացատրվում, մինիստրի առաջարկութեամբ՝ յատկացնելու 28,000 րուբլի արտասահմանի ռուսահպատակներին օգնելու համար։

Թագաւոր Կայսրը Գէորգիեւսկի Թուր շնորհեց կովկասեան մահմեդական հեծելազօրի հրամանատար Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչին։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հաղորդում են, որ գերմանական գլխաւոր զինւորական իշխանութիւնը նոր կենտրոնական կոմիտէտ է հաստատել զօրքի համար գարեջուր պատրաստելու։

ԼՕՆԴՕՆ.—Անգլիական Թագաւորը շրջելով ռազմամթերք պատրաստող վայրերը, Բիրմինգհէմում ճառ արտասանեց, որով ասաց, որ զօրքը գնահատում է այն եռանդը, որով կատարվում են աշխատանքները, և հաւատ արտայայտեց, թէ երբ աւելացվի ռազմամթերքի ներկայ արտադրութիւնը, հետեւանքում կը ստացվի յաղթութիւն։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մեծ Իշխան Գերագոյն Զօրահրամանատարն առանձին հրամանով նախազգուշացնում է, որ բոլորովին անպարտ զօրականների հասցէին զանազան ստայօղ ու անհիմն լուրեր տարածողները ևս կը դատվեն պատերազմական օրէնքներով, ինչպէս իրանց արժանաւոր պատիժը կրեցին իսկական պետական ոճրագործներ Միասօյեդովը, Ֆրէյդբէրգը և Զայցմանը։

ՑԵՏԻՆԻԷ.—Վուկոտիչի հրաժարման պատճառով, զինւորական մինիստրի պաշտօնը յանձնվեց Բոյովիչին։ Վուկոտիչը մնում է մինիստրների խորհրդի նախագահ։

ՊԱՐԻԶ.—Պուանկարէն այցելեց Էնից դէպի հիւսիս գտնվող զօրագծի ամրութիւնները։ Գիւղում, որի կողքի ռազմաճակատը ենթարկվեց ուժեղ ռմբակոծութեան, Պուանկարէն ներկայ եղաւ նկուղի մէջ այն դասին, որ տալիս էր ուսուցիչը գիւղում մնացած երեխաներին։

ԼՕՆԴՕՆ.— Ռէյտէրի գործակալութիւնը յայտնում է. «Ամբողջ անգլիական ժողովուրդը սրտատրոփ հիացմունքով հետեւում է աւստրօ-գերմանական զօրքերի յարձակումների դէմ պաշտպանվող քաջարի ռուս զօրքերի գործողութիւններին։ Երեկոյեան և ցերեկվայ լրագիրները յոյս են յայտնում, որ Մեծ Իշխանի զօրքի յամառ դիմադրութիւնը կը պսակվի աջողութեամբ»։

ՍՕՖԻԱ.—Զինւորական դատախազը յանձնեց քննիչին դատարանի որոշումը Գէննադիէվի դէմ դատ սկսելու մասին։

Վճռաբեկ դատարանը վաւերացրեց զինւորա-դաշտային դատարանի դատավճիռը՝ կազինօյում տեղի ունեցած մահափորձի յանցաւորների վերաբերմամբ։ Ոճրագործները մահվան պատժին կենթարկվեն վաղը։

Գերմանական դեսպան Վագենհէյմը երէկ հասաւ Սօֆիա, ուր ունկնդրութիւն ունեցաւ Թագաւորից և տեսակցեց Ռադոսլաւովի հետ։ Այսօր Վագենհէյմը մեկնում է Բուխարէստ։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից տեղեկացնում են, որ ռէյխստագը գումարվելու է օգոստոսի 4-ին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Հռոմից, որ տեղական տեղեկութիւնների համաձայն՝ Գերմանիայում շուտով զէնքի են կանչվելու կանայք։

◆ Անգլիական պարլամենտում Ասկվիտը թէև ոչ ուղղակի, բայց հասկանալի ձեւով յայտնել է, թէ հարկաւոր են գումարներ Ռումինիայի և Յունաստանի համար, որոնք միանալու են քառեակ համաձայնութեանը և միայն սպասում են դրամական վարձատրութեան։

◆ Պետական Դումայի Նախագահ Ռոձեանկօն տեղեկութիւն է ստացել, որ նրա օֆիցէր որդին թեթև վիրաւորվել է պատերազմում։

◆ «Temps»-ը գրում է, որ ռուսական զօրքի նահանջը ցոյց է տալիս նրա ռազմական ընդունակութիւնը, նաև այն, որ ռուսաց զօրքի ոգին բնաւ չէ տուժել։ Լրագիրը ենթադրում է, որ գերմանացիք ձգտում են վանել ռուսներին Վարշավայի այն կողմը և այնտեղ կառուցանել ամրութիւններ, ինչպէս վարվեցին նրանք արեւմտեան զօրաճակատում։ Սակայն այդ մտադրութիւնը դժուար իրագործելի է, և եթէ նոյն իսկ գերմանացիներին աջողվի այդ իրագործել, այն ժամանակ ռուսները կը հարկադրեն նրանց պահել այնքան խոշոր թւով զօրք, որ այլ զօրաճակատները անկարելի կը լինի զօրքեր առաքել անհրաժեշտ քանակութեամբ։ Գերմանական գործողութիւններն արեւելեան ռազմաճակատում վճռական հետեւանքներ չը տուին, մինչդեռ գերմանացիների առաջխաղացումը Գալիցիայում նրանց արժեց շատ թանգ։

◆ Երրեակ համաձայնութեան պետութիւնները համաձայնել են զիջել Մակեդոնիան, իսկ Սերբիային բաւարարել լայն կերպով ի հաշիւ Աւստրիայի։ Սերբիան պատրաստ է զիջել Մակեդոնիան այն դէպքում, երբ Բոլգարիան հանդէս գայ քառեակ համաձայնութեան օգտին։

◆ «Р. У.»-ին հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը գտնվում է Լովիչի մօտ։

◆ Անգլիան գնում է Ամերիկայում ամբողջ բամբակը և ապագայ բերքը։ Գերմանական լրագիրներն այդ առիթով կուրծք են ծեծում։

◆ Աւստրիայում ամեն օր խոլերայից մահանում են 800, Ունգարիայում 500 մարդ։

◆ Պարիզում հիմնվում է մի միջազգային խորհրդանշան դաշնակից ոյժերի զօրահանութեան տարեդարձի յիշատակին. խորհրդանշանը լինելու է կարմիր, սև և դեղին գոյնի ժապաւէնի վրա (արիւն, սուգ և յոյս)։

◆ Գերմանական կառավարութիւնը յայտարարել է, որ ամերիկեան գործարաններում աշխատող գերմանացի ինժեներները, տեխնիկները և բանւորները եթէ չը վերադառնան հայրենիք, կը համարվեն դաւաճաններ։

◆ «Н. В.»-ն կարծում է, որ գերմանացիների ջանքերը ուղղված են ոչ այնքան Րիգայի դէմ, որքան Շավէլի շրջանի դէմ։ Այնպէս որ, բացի Բուգի և Վիսլայի միջից և Նարէվից, խոշոր ճակատամարտ պէտք է սպասել նաև Շավէլի շրջանում։

◆ Ի նկատի ունենալով, որ Գերմանիայի հետ կրճատվելու է առեւտրական փոխանակութիւնը, առեւտրական դպրոցներում գերմաներէնը փոխարինվելու է ֆրանսերէնով և անգլերէնով։

◆ Գերմանական սօցիալ-դեմօկրատների կուսակցութեան մէջ պառակտում է ծագել. Գօշկէն, Վեստիէրը և այլք կազմակերպում են Վիւրտենբէրգում նոր խմբակ «Սօցիալիստական միութիւն» անունով։ Գուցէ միանան նաև Լիբկնէխտը և Հաազէն։

◆ Յունաց «Էմբրա» լրագիրը հաւատացնում է, որ բոլգարական Լագոսը հանդիսանում է Միջերկրական ծովում գերմանական սուզանաւերի կայան։

ի միջի այլոց, այն խոշոր զանազանակերպութիւնը, որ կայ գիւղական հասարակութիւնների ազգաբնակութեան քանակի մէջ՝ սկսած հազար ու էլ աւելի պակաս երկսեռ շունչից մինչև 12,000 շունչ ու աւելի։ Նոր օրէնքը, որ մտցնում է գիւղական հասարակութեան մէջ վօլօստնօյի կազմակերպութիւնը, դրդում է դիմել ներկայումս գոյութիւն ունեցող գիւղական հասարակութիւնների վերաքննութեանը՝ գիւղերը նոր դասաւորումների ենթարկելու նպատակով, տեղական բոլոր ոյժերը լաւագոյն կերպով օգտագործելու և, կարելւոյն չափ, բաւարարելու համար տեղական բոլոր այն կարիքները, որոնք միշտ էլ գերազանցում են առանձին-առանձին, գիւղական հասարակութիւնների մէջ նրանց համար, օրէնքով, պարտադիր կօռւբէգեաներից։

Այժմ էլ շատ գիւղական համայնքներ Անդրկովկասում, անկախ՝ օրէնքով նրանց վրա դրված պարտադիր ծախքերից, յօժարակամ յանձն են առնում տեղական բարեկարգութեան այլևայլ ճիւղերի վերաբերեալ ծախքերը։ Գիւղական ինքնավարութիւնների այդ տեսակ գործունէութեան ծաւալը, որը կարելի է իրաւացի կերպով անուանել զեմստվային, կախված է ոչ միայն տուեալ համայնքի գիւղական բնակիչների նիւթական ապահովութեան աստիճանից և նրանց մէջ եղած կուլտուրական ոյժերի քանակից, այլև, մեծ չափով, վարչութեան (ադմինիստրացիայի) գործունէութիւնից ու, նախ և առաջ, այն պաշտօնավար անձերից, որոնք կոչված են օրէնքով ղեկավարելու գիւղական ինքնավարութիւնը։ Արդարև, այն տեղերում, ուր ադմինիստրացիան իր սրտին մօտ է ընդունում ազգաբնակութեան շահերը, նպատակ է ընտրում իր համար գիւղացիների ինքնագործունէութիւնը զարթեցնելը և յանձն է առնում զանազան կուլտուրական ձեռնարկութիւնների նախաձեռնութիւնը, գիւղական հասարակութիւնների աշխատանքը տեղական բարեկարգութիւնների խնդրում, ինչպէս այդ ցոյց է տալիս կեանքը, աւելի է ընդարձակ։

Գիւղական ազգաբնակութեան ինքնագործունէութեան ու ինքնօգնութեան պահանջի գոյութիւնը տեղական բարեկարգութեան գործում՝ ցայտուն կերպով վկայվում է վերջին տարիներս Անդրկովկասի առանձին գիւղական վայրերում զանազան նպատակներով բացված կօօպերատիվ ընկերութիւնների բաւականաչափ զարգացմամբ։ Ողջունելով այդ բոլոր լաւ ձեռնարկութիւնները, որոնք սեփական կենցաղը բարելաւելու նպատակով սկիզբն են առնում փոխադարձաբար իրանց ոյժերն ու միջոցները իրար վստահացող առանձին անձնաւորութիւնների միութիւններ կազմելու հողի վրա, ես չեմ կարող, սակայն, չը մատնանշել ձերդ գերազանցութեանը, որ այդ պատահական միութիւնները կօօպերացիաների ձեւով չեն կարող ամբողջապէս փոխարինել իրանով այն զեմստվային գործունէութիւնը գիւղում, որը, գործի պատշաճաւոր կազմակերպման դէպքում, կարող էին զարգացնել գիւղական հասարակութիւնները ադմինիստրացիայի աջակցութեամբ ու հսկողութեամբ, և ինքնին կօօպերատիվների զարգացումը որոշ չափով ցոյց է տալիս, որ գիւղական հասարակութիւնները թոյլ են կազմակերպված այդ կողմից։ Ահա թէ ինչու, գիւղերը առաջիկայում գիւղական հասարակութիւնների վերադասաւորելիս, պէտք է անպատճառ նկատի առնել՝ նոյնպէս գիւղական ազգաբնակութեան զեմստվային ինքնագործունէութեան համար բարեյաջող պայմաններ ստեղծելը։

(Վերջը միւս անգամ)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՕՏԱՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
11—12 յուլիսի

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Ամերիկեան նօտան սկսվում է նրանով, որ ամերիկեան կառավարութիւնը ցաւում է, որ նա գերմանական նօտան գտաւ վերին աստիճանի անբաւարար, որովհետև այդ նօտան չէ վերացնում երկու կառավարութիւնների միջև ծագած իրական տարաձայնութիւնները և չէ մատնանշում օրինականութեան ու մարդասիրութեան սկզբունքների գործադրութեան ուղիներ՝ քննվող լուրջ հարցի նկատմամբ։ Ընդհակառակն, նօտան յանգում է մասամբ վերոյիշեալ սկզբունքները բացասող տեսակէտի։

Ամերիկեան կառավարութիւնը գոհունակութեամբ է ընդգծում, որ Գերմանիան ընդունում է այդ սկզբունքների իսկութիւնը և այն, ինչ վերաբերում է սուզանաւերի գործադրութեան ընդդէմ առեւտրանաւերի։

Սակայն Միացեալ-Պետութիւններին շատ անհաճելի է այն, որ Գերմանիան իրան համարում է բաւականաչափ ազատված այդ սկզբունքների գործադրութիւնից անգամ չէզոք տէրութիւնների վերաբերութեամբ, գտնելով որ առ այդ ստիպում է նրան Մեծ-բրիտանական քաղաքականութիւնը չէզոք առեւտրի վերաբերմամբ։ Միացեալ Պետութիւնները չեն կարող քննել Մեծ Բրիտանիայի քաղաքականութիւնը, որ ոչնչով չէ արդարանում նաև այն դէպքում, երբ գերմանական ռազմանաւերի հրամանատարները խախտում են ամերիկացի քաղաքացիների իրաւունքները։ Ապօրինի և անմարդասէր վարմունքներն արդարացում չունեն։ Եթէ նման գործողութիւնները շարունակվեն, առաջ կը գայ չէզոք ազգի գերիշխանութեան անմիջական խախտում։ Միացեալ Պետութիւնները գիտեն, որ ծովային պատերազմ վարելու չը նախատեսված եղանակները կարող են լինել, բայց չեն կարող թոյլ տալ խախտել ամերիկեան ժողովրդի հիմնական իրաւունքները։

Յայտնելով բաւարարութիւն այն առիթով, որ վերջին ժամանակ գերմանական սուզանաւերի հրամանատարները զանցառու չեն լինում ընդունված նաւարկութիւնից, և առաջարկելով Գերմանիային պարաւանք արտայայտել «Լուզիտանիայի» ջրասուզելու համար, ամերիկեան կառավարութիւնը ասում է. «Միացեալ Պետութիւնները չեն կարող ընդունել այն առաջարկութիւնը, որով պահանջվում է տալ այն նաւերի ցուցակը, որոնք կարող են ազատօրէն նաւարկել ապօրինաբար արգելված ջրերով, որովհետև այդօրինակ համաձայնութեան իրողութիւնն ինքնին կը թոյլատրէ յարձակում գործել մնացած նաւերի վրա և կը ներկայանայ համազօր հրաժարման այն սկզբունքներից, որ պահանջում է Միացեալ Պետութիւնների կառավարութիւնը»։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.— Գերմանիայի ուղարկված նօտայի հրատարակութիւնից յետոյ յայտնի դարձաւ, որ Վիլսոնը պահանջել է զինւորական և ծովային բարձր կառավարութիւններից զեկուցումներ ազգային պաշտպանութեան վիճակի մասին։ Ներկայ թիւրիմացութիւններից անկախ, Վիլսոնը արդէն մի քանի ժամանակ առաջ հաւանութիւն տուեց ծովային ծրագրին, որ և նա այժմ ներկայացրել է կոնգրէսին։ Կողմնակից լինելով, որպէսզի ամերիկեան նաւատորմը համազօր լինի մի այլ մեծ պետութեան նաւատորմին, Վիլսոնը առաջարկում է կոնգրէսին ուղարկվելիք ծրագրի մէջ մտցնել զօրքի վերակազմութեան հարցը։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Ամերիկեան նօտայի առիթով «Բեռլինէր-Լօկալ-Անց.»-ը ասում է. «Նօտայի մէջ շօշափված հարցերը պէտք է, ի հարկէ, ենթարկվեն մանրազնին քննութեան. յամենայն դէպս պէտք է հաւատացած լինել, որ Գերմանիայի համար այնքան արժէքաւոր ներկայ պատերազմը սուզանաւերի օգնութեամբ այսուհետև կը գործադրվի յօգուտ Գերմանիայի, աւելի քիչ վնաս հասցնելով չէզոք երկիրներին»։ «Բեռլինէր-Տագ.»-ը, ընդհակառակն, դժգոհ է ամերիկեան նօտայից և կարծում է, որ նա միանգամայն որոշակի մերժում է գերմանական առաջարկութիւնները»։

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 յուլիսի

ՎԱՐՇԱՎԱ.—Վարշավայում և շրջակայքում կան բաւական մեծ թւով գործարաններ։ Այդ գործարանների մի մասը պատրաստում է ծովային և զինւորական մինիստրութիւնների պատուէրները։

Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ անկարելի է հայթայթել մշտապէս վառելանիւթ այդ գործարաններին, և որ Վարշավան մօտ է ռազմագծին, վճռված է այդ գործարանները, որոնք առաջին նշանակութիւն ունեն պետական ինքնապաշտպանութեան համար, փոխադրել ներքին նահանգները։

Կառավարութիւնը լայն կերպով ընդառաջելով գործարանատէրերին՝ թոյլատրել է նրանց ձրիաբար փոխադրել բոլոր կահաւորումը, նաև բանւորներին, յատկացնելով անհրաժեշտ դէպքերում գումարներ և ապահովելով պատուէրները։

Մնացած գործարանները, որոնք չեն կարող օգտագործվել պատերազմական նպատակների համար, կը շարունակեն իրանց գործունէութիւնը, որչափով նրանք ապահոված են վառելանիւթով ու հում նիւթերով։

ՌԻԳԱ.—Ի նկատի ունենալով պատերազմական գործողութիւնների մօտիկութիւնը և Ռիգայի գործարաններին վառելանիւթ և հում նիւթեր հասցնելու դժուարութիւնները, վճռված է գործարանները և պահեստները փոխադրել ներքին նահանգները։

Կառավարութիւնը թոյլատրել է ձրիաբար փոխադրել բոլոր շարժական իրերը և բանւորներին և լայն ֆինանսական օգնութիւն ցոյց տալ գործարանատէրերին։

Ռիգայի բոլոր խոշոր գործարանները զբաղված են զինւորական մինիստրութեան պատուէրները կատարելով։ Նրանց նշանակութիւնը պետական պաշտպանութեան համար առաջին է։

ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 յուլիսի

ՄՕՍԿՎԱ.—Քաղաքագլուխ Չէլնօկովի նախագահութեամբ բացվեց քաղաքների ներկայացուցիչների համագումարը զօրքի անհրաժեշտ պիտոյքները հոգալու և թանգութեան դէմ մաքառելու հարցերի առիթով։

Մասնակցում են խոշոր քաղաքների, զեմստվային միութեան, կօօպերատիվ և վարկային հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Նախագահը այսպէս բնորոշեց համագումարի նպատակը. «Հասարակական ոյժերով ամենից առաջ պէտք է անել ամեն կարելին, զօրքի բոլոր անհրաժեշտ պէտքերը բաւարարելու համար և դրանով օգնել նրան յաղթութիւն տանել ուժեղ ու վտանգաւոր թշնամու դէմ։ Ոչ պակաս կարեւոր է երկրորդ նպատակը՝ ապահովել երկիրը նորմալ տնտեսական պայմաններով և վերացնել այն ամենը, ինչ կարող է քայքայել տնտեսական կեանքը և ծանր դարձնել ժողովրդական մասսաների դրութիւնը»։

ԱԼԲԱՆՕ-ՉԵՐՆՕԳՕՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
12 յուլիսի

ՆԻՇ.—Պաշտօնական։ Նրանից յետոյ, երբ Սկիւտարին և նրա շրջակայքը գրաւեցին չերնօգօրական զօրքերը, աւստրիական և թիւրքական գործակալների մեծ մասը փախաւ Միրիդիտիա, ուր նրանց աջողվեց ոտքի հանել մի քանի ալբանական ցեղեր։ Չէրնօգօրցիք ցիրուցան արին նրանց հրոսակախմբերին, վերականգնեցին կարգուկանոնը և հանգստութիւնը, ձեռք ձգեցին 10,000 հրացան և 2 գնդակացիր։ Գերվել են մի քանի երիտասարդ-թիւրքեր, որոնք ուղարկվել են Չէրնօգօրիա։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
10—12 յուլիսի

ՍՊԱՀԱՆ.—Եկան գերմանական 5 գործակալ և մի քանի զինված աւստրիացի։

Գերմանացիք հակառակ արգելքի նորից երեւում են փողոցներում զինված պարսիկների ուղեկցութեամբ։

ՍՊԱՀԱՆ.—Ժանդարմէրիայի պետ մայոր Չիլադէրը վճռեց հրաժարվել ոստիկանութեան պետի պաշտօնից դաւերի, միջոցների բացակայութեան և ոստիկանութեան կազմալուծման պատճառով։ Մերժման դէպքում մայորը սպառնում է վերականգնել նախկին վանդները։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
12 յուլիսի

ՉԻԿԱԳՕ.—Գետի վրա խորտակվեց մի շոգենաւ, որի վրա գտնվում էին էկսկուրսանտներ։ Մինչև այժմ հանել են 500 դիակ։ Երկիւղ կայ, որ խեղդվողների ընդհանուր թիւը 1200 է։

ՔՈՒԹԱՅԻՍ.—Րիօն դիմող ճանապարհորդական գնացքը կպաւ վարժութիւններ կատարող շոգեմեքենայի. սպանվել է 1, վիրաւորվել են 6 հոգի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Ներկայումս հայ ազգի կեանքի մէջ երկու աչքի ընկնող երեւոյթներ են տեղի ունենում. մի կողմից ծով դարձած կարիքը, միւս կողմից՝ անհասկանալի անտարբերութիւնը։

Կարիքը ամեն օր, ամեն ժամ ճիչ, աղաղակ է արձակում, կարիքը հաց է ուզում, շոր է ուզում, զէնք է ուզում, իսկ հայ ազգի ունեւոր դասակարգը անտարբերութեամբ է պատասխանում։ Ոչ մի ժամանակ այդ անտարբերութիւնը աչքի չէ ընկել, ինչպէս ներկայ փոթորկալից ժամանակներում։ Անհելի պատահարները վերջապէս եկան հայ ունեւորին բաց և ազատ կատարել տալու իր սրբազան պարտքը, բայց հայ ունեւորը իր հարիւրաւոր միլիոնների հասնող կարողութիւնից միայն կոպէկներ տուեց ազգին. և այդ ե՞րբ, ինչպիսի՜ խորհրդաւոր օրերում...

Երբ թշուառ Թիւրքահայը դարերի ընթացքում գերմարդկային տոկունութեամբ մահմեդական լուծը իր ուսերի վրա կրելուց յետոյ՝ այսօր միացել է եւրօպական դիւական համերգին, յուսոյ նշոյլը սրտում՝ թօթափելու անարգ լուծը, երբ Թիւրքահայը իր կայքը, իր թանգագին որդիների, աղջիկների, հարսների արիւնը և պատիւը հրապարակ է հանել մահմեդական լծից ազատվելու համար, հայ ունեւորը կոպէկներ է ուղարկում Թիւրքահային օգնելու համար... Դա ծաղր և հեգնութիւն է, այլ ոչ թէ օգնութիւն։

Առաջները դժուարութեամբ էին տալիս մեր ունեւորները ազգային գործին. չէին հաւատում. գաղտնի էր, հաշիւ չէր տրվում։ Ենթադրենք, որ հիմնաւոր էր այդպիսի վերաբերմունքը։ Իսկ ա՞յժմ։ Ի՞նչ առարկութիւններ են անում այժմ, չը գիտեմ։ Գուցէ այժմ էլ կասկածում են, որ իրանց տուած նուէրները ի զո՞ւր կանցնեն, Թիւրքահայոց ազատութեան յոյսը ջուրը կընկնի. այս պատճառով են աւելորդ համարում մեծ զոհողութիւններ անել։

Անշուշտ մեզանից ոչ ոք դրականապէս չէ կարող ասել, թէ վաղը ինչ կը բերի մեզ, բայց այսօր հաւատով և յոյսով զինված հայ երիտասարդը և մինչև անգամ հայ կինը հրապարակ են դուրս եկել զոհելու իրանց անձը՝ այդ յոյսը իրականացնելու համար. եթէ հայ երիտասարդի թափած արիւնը ի զուր կորչի, ինչ կը լինի, եթէ զուր կորչեն և ունեւորի տուած ոսկիները. մի՞թէ ոսկին աւելի թանգ է, քան արիւնը։

Սակայն մենք հաւատում ենք, որովհետև դա ճշմարտութիւն է, որ երբ մի գաղափարի համար զոհ է տրվում, արիւն է թափվում, այդ գաղափարը չէ մեռնում. գաղափարի համար թափված զոհի արիւնը զուր չէ կորչում. նա ծլում, ծաղկում է, պտուղ է տալիս. իսկ հայ ազգի ազատութեան գաղափարի համար շատ զոհեր են տրվել, շատ թանգագին արիւն է թափվել. այդ արիւնը պէտք է տոգի, կանաչցնի հայ ազգի ազատութեան գաղափարը, հետեւաբար և ի զուր չեն կորչի մեր ունեւորի տուած ոսկու զոհերը։ Դրան մենք հաւատում ենք։

Բայց գուցէ մենք այնքան էլ բարոյական և իրաւական հիմքեր չունենք մեծ պահանջներ անելու, մեծ զոհողութիւններ սպասելու մեր ունեւոր դասակարգից. գուցէ վիճելի է այս խնդիրը։ Թող դրան մեր ունեւորները պատասխան տան. մենք այժմ միայն արձանագրում ենք մեր ունեւոր դասակարգի ամենուրեք, ընդհանուր և անհասկանալի անտարբերութիւնը և ժլատ զոհաբերութիւնը ազգի ազատութեան սեղանի վրա։

Սակայն արձանագրելով փաստը չը պէտք է բաւականանալ. պէտք է բաղխել դուռը, գուցէ բացվի։ Ո՞վ պէտք է բաղխէ այդ դուռը։ Տեղական ոյժերը, ինչպէս երեւում է, ամեն տեղ սպառել են իրանց միջոցները. նրանց վրա մեծ յոյսեր դնել այլևս աւելորդ է, իսկ կարիքը պահանջում է։

Հայ ժողովուրդը ասում է. «Լաւ է Կաղանդ, քան Վարդավառ», որովհետև կաղանդը գարուն է բերում, իսկ Վարդավառը ձմեռ։ Արդէն Վարդավառն անցաւ, շուտով ձմեռվայ հոտ պիտի փչի. հայ երիտասարդը պիտի կռուի ոչ թէ ծաղկազարդ լեռների և կանաչազարդ դաշտերի վրա, այլ ձիւնով և սառուցով պատած խոր-խոր ձորերի մէջ։ Պաշար է հարկաւոր, շոր է հարկաւոր։ Զինւորի շորը շուտ է մաշվում, որովհետև նա մեզ նման մաքուր փողոցներում չէ զբօսնում, նա փորսող է տալիս քարերի, մացառների և ցեխերի մէջ։

Ժամանակ է մտածել ձմեռվայ մասին. հայ կամաւորների թիւը հետզհետէ ստուարանում է. հայ ժողովուրդն է արդէն ոտքի կանգնել. օգնել պէտք է այդ ժողովրդին, միջոցներ պէտք է հայթայթել։ Ո՞վ պիտի տայ մեզ այդ միջոցները։ Միակ յոյսերս հայ ունեւորն է. նրան պիտի դիմել, հրապարակ հանել, գործի ձեռնարկել տալ, եթէ ոչ՝ ուշ կը լինի վերջը։

Ասացի, թէ տեղական ոյժերը սպառել են իրանց միջոցները, թուլացել է և շրջաբերական զանազան գրութիւնների ազդեցութիւնը, նոր միջոցի պիտի դիմել, այլ եղանակով պիտի մօտենալ գործին։ Պէտք է կազմակերպել հայ ունեւորին յանուն ազգային սուրբ գործի, ինչպէս կազմակերպվում են զանազան աշխատաւոր, արհեստաւոր դասակարգեր։ Ո՞վ կարող է այդ անել, ինչ միջոցներով կարելի է գլուխ բերել այդ կազմակերպութիւնը։

Ահա հարցեր, որոնց վճռելու համար պէտք է շտապել։

Գումարել հայ ունեւորների համաժողով ամենալաւ միջոցն էր, բայց դժուար իրագործելի է այդ. միակ միջոցն է առ այժմ մի նուիրատուութիւն կազմել բարձրաստիճան հոգեւորականներից և ազդեցիկ աշխարհական անձերից՝ շրջելու հայաբնակ քաղաքները, բացատրելու գործի լրջութիւնը և շուտափոյթ օգնութեան, մեծ չափով օգնութեան, մեծ զոհաբերութեան անհրաժեշտութիւնը, միևնոյն ժամանակ և որոշ կազմակերպութիւն մտցնելու մեր ունեւորների մէջ, որովհետև կոպէկները չեն օգնի. պատերազմը այս օգոստոսին վերջանալու չէ, գուցէ մի քանի ձմեռների սառնամանիքները հալեն, գան նորից ծիծառունքներ, մինչև որ տեսնենք մեր անձկալիներին։

Ա. Ք. Վարդանեան

Եկատերինօդար

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՈՎ ՄԱՐԴ ՈՐՍԱՑՈՂՆԵՐԸ

Ներկայ ահեղ պատերազմի ընթացքում, երբ համայն մարդկութեան վրա բարոյական պարտականութիւն է ընկնում ըստ չափու կարողութեան ամոքել ու սփոփել, մխիթարել ու մեղմացնել պատերազմի պատճառով առ հասարակ բոլոր դժբախտացածների ցաւերը, երբ ըստ Աւետարանի սկզբունքի՝ «չիք խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի», մեզ թւում է, թէ իւրաքանչիւր մի բարերարող անձն կամ հաստատութիւն պէտք է իր նպաստը տայ առանց յետին հաշիւների, առանց որևէ ակնկալութեան, այլ միմիայն հետևելով Աւետարանի «չիք խտրի» սկզբունքին և անսալով իր մաքուր խղճի թելադրանքին։

Եւ իրականութեան մէջ հարիւրաւոր փաստեր գալիս են ապացուցելու, որ մարդիկ ներկայի ընդհանուր չարիք՝ պատերազմից այս կամ այն կերպ վնասվածների վերաբերմամբ իրանց բարեգործութիւնը կատարում են գլխաւորապէս դրդված մարդասիրական վեհ զգացմունքից, ինչպէս օրինակ ամերիկացիները, որոնք իրանց նիւթական օգնութիւնը հասցնում են անխտիր բոլորին և՝ առանց որևէ ակնկալութեան։

Սակայն կան մարդիկ, որոնք իրանց մարդասիրական վերաբերմունքը ցոյց են տալիս որոշ նկատումով և որոշ պայմանով։

Ընթերցողները երևի կը յիշեն «Մշակի» № 40-ում տպված հետեւեալ յայտարարութիւնը. «Պետրօգրադից հեռագրում են, որ պաստոր Նէգրան Պետրօգրադի Կարմիր Խաչին յայտնել է, որ նրա ծուխը ցանկութիւն է յայտնել լիտերական ոգով կրթել ու որդեգրել այն հայ երեխաներին, որոնք զրկվել են ծնողներից ներկայ պատերազմում։ Այդ յայտարարութիւնը յանձնված է քաղաքային հայկական կոմիտէտին»։

Մարդ որսալու առաջին փորձը չէ այս, որ անվում է. պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամեն անգամ, հէնց որ հայերիս ֆիզիքական գոյութեանը վտանգ է սպառնացել, իսկոյն երևան են եկել դիմակաւորված «սրտացաւները» և առաջարկել իրանց օգնութիւնը՝ դաւանափոխ անելու պայմանով։ Հինը կրկնվում է և գուցէ այն տարբերութեամբ միայն, որ այն ժամանակ կիրակոս պաստորն է եղել իր «բարեպաշտ» ծխի ցանկութիւնը յայտնողը, իսկ այժմ պաստոր Նէգրան է։

Սակայն եթէ նման մարդիկ նպատակ են դրել իրանց բարեգործութիւնը կատարել դաւանափոխ անելու պայմանով, եթէ նրանց մարդկային խիղճը միայն այն ժամանակ է շարժվում, երբ կարողանում են օգնութեան կարօտեալներին իրանց ուռկանի մէջ ձգել, ապա լաւ է, եթէ այդ խիղճն իսկի չը կենդանանար և մնար ընդմիշտ մեռած դրութեան մէջ, անտարբեր ու անզգայ։

Խանքենդ Ա. Ասլանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սոսկալի ոճրագործութիւն

Զաքաթալա, 7 յուլիսի

Շրջանիս Կախ-ուանում երկու օր առաջ տեղի է ունեցել հետեւեալ սոսկալի դէպքը։

Զաքաթալացի ծերունի Յովհաննէս-աղէր Տէր-Միքայէլեանը երեկոյեան դէմ վերադառնալիս է լինում Մեշաբաշ թուրքական գիւղից, ուր գտնվում է իր կալուածքը՝ Կախ։ Աւանի մօտ նրա վրա յարձակվում են երկու յայտնի սրիկաներ՝ վրացի Նիկոլայ Նարալօվ և հայ Մարտիրոս Գասպարեան, որոնք պահանջում են ծերունուց 5000 ր. «փրկանք»...

Տէր-Միքայէլեանը իր մօտը ունեցածը 7 ր. փողը տալով սրիկաներին՝ աղերսում է խնայել իրան, չը սպանել։ Սակայն նրա բոլոր աղաչանք-պաղատանքը զուր է անցնում. սրիկաները դաշոյնների մահացու վէրքեր են հասցնում ծերունուն և հանգիստ խղճով հեռանում դէպքի վայրից։ Անդէն ծերունին մեկի մօտը կծած լինելով, երբ ուշքը տեղն է գալիս, պատմում է եղելութեան մասին Կախի գաւառակի կառավարչին, որը և կալանաւորում է նոյն գիշերը սրիկաներին։ Նրանք խոստովանվում են իրանց գործած զարհուրելի ոճիրը։

Ասում են՝ զոհի դիակը բերելու են քաղաքս թաղելու համար։

Քաղաքում անասելի շոգ է անում. ցերեկները տնից դուրս գալ չէ լինում։

Սօյգաղէ

Մեր կեանքից

Բերդի, 1 յուլիսի

Մեզ մօտ տիրում է ապրանքների սաստիկ պակասութիւն և թանգութիւն։

Օրինակ՝ մինչև այժմ հացի փ. 6 կ. էր և թխում էին լաւ հաց, բայց ահա 5—6 օր է, որ գինը բարձրացաւ 7 կ. և հացի տեսակն էլ փոխվեց վատի, այսինքն սպիտակ ալիւրի հետ խառնում են սև, և թոնրից դուրս են բերում բաւական խմոր։ Շաքարի փ. 30 կ. է, և այն էլ հազիւ է գտնվում։

Երէկ տեղիս «Սարթի բազարում» պատահեց հետևեալ դէպքը։ Երկու սարթ՝ թռչուն կռւացնելիս՝ կռւում են, ու նրանցից մէկը հանում է ատրճանակը և երեք անգամ արձակում միւսի վրա։ Գնդակները երեքն էլ դիպչում են և ծանր վիրաւորում։ Մօտ են վազում վիրաւորվածի ազգականներն ու ծեծի ենթարկում առաջինին, ապա գալիս են միւսի ազգականները, և սկսվում է մի չը տեսնված ընդհարում երկու կողմերի միջև։ Ոստիկանութիւնը հասնում է և ցրում ամբոխին։ Վիրաւորվածը 4 ժամից յետոյ հոգին աւանդում է։ Մեղաւորը և նրա ազգականները ձերբակալված են։

Ա. Ազիմ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կիրակի, յուլիսի 12-ին, Վանքի աւագ եկեղեցում, պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ կատարվեց հանգուցեալ պօրուչիկ, հայ կամաւորների 6-րդ գնդի հրամանատար Գ. Աւշարեանի յիշատակին նշանակված հոգեհանգիստը, որ նախաձեռնել էր Հայկ. Կենտր. Բիւրօն։ Հոգեհանգստի ժամանակ հանգուցեալ մարտիկի յիշատակի առիթով խօսեց առաջնորդը, որ շեշտեց այն իրողութիւնը, թէ Աւշարեանը և նրա մահով ընկնող հարիւրաւոր հայ կարիճ կամաւոր զինւորները բարձրացնում են հայի պատիւը օտարների առաջ, կռիւ մղելով հայութեան դարաւոր բռնակալ Թիւրքիայի դէմ ռուս քաջարի զօրքի շարքերում։

◆ Բայազիդ-Վան-Ալիշէկերտի շրջանի կառավարչից ստացվել է հետևեալ հեռագիրը քաղաքագլխի անունով. «Արճէշ քաղաքում բծաւոր տիֆ և փորհարինք հիւանդութիւններ են։ Համաճարակները տարածվում են. մահացութեան թիւը մեծ է. պառկած են մօտ 500 հիւանդ։ Ազգաբնակութիւնը քաղցած է. ոչ մի օգնութիւն չը կայ։ Անհրաժեշտ է շուտափոյթ մատակարարական օգնութիւն»։ Քաղաքների համառուսական միութեան լիազօրը յուլիսի 11-ին փոխադրեց 3000 ռուբլի Մօսկվայի նուիրած գումարից։

◆ Թիֆլիս է եկել ֆինանսների մինիստրի օգնական գ. խ. Վ. Վ. Կուզմինսկին, որ անցեալ օրը այցելեց Թիֆլիսի արքունական պալատը և պետական գանձարանը։

◆ Թիֆլիսի վաճառականութիւնը այս օրերս խորհրդակցութեան գումարվեց աւագ Ա. Միլեանի նախագահութեամբ և ընտրեց յատուկ մասնաժողով, որ զբաղվելու է վաճառականութիւնից և առևտրականներից դրամ և իրեր հաւաքելով յօգուտ քայքայված Հայաստանի թշուառ ազգաբնակութեան։ Հէնց խորհրդակցութեան օրը ստորագրութիւններով հանգանակվեց մօտ 10,000 ր.։

◆ Նահանգապետը տեղեկացրել է քաղաքային վարչութեան, որ վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելու համար քաղաքին յատկացված է 57,322 ռուբլի։

◆ Անցեալ յունիս ամսում քաղաքային առաջին ապաստարանում գիշերել են 144 հոգի, որոնցից 10-ը կանայք։ Ըստ ազգութեան նրանք բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 20 տղ., հայեր՝ 101 տղ. և 10 կին, վրացիներ՝ 20 տղ., լեհ՝ 1 տղ., օս՝ 1 տղ., յոյն՝ 1 տղ. և զանազան ազգութիւններից՝ 1 տղ.։

◆ Համաձայն ոստիկանական տեղեկութեան, յուլիսի 11-ին, երեկ. ժ. 6-ին, Բարօնսկայա փողոցում թիֆլիսեցի Ալէքսէյ Մարգարեանի և Արշակ Յարութիւնեանի միջև սկսվեց ծեծ ու ջարդ, որի ժամանակ վերջինը երկու վէրք հասցրեց Մարգարեանի մէջքից և մի վէրք էլ ծեծին մասնակցող Ռոգալօվին ձախ ոտքից։ Վիրաւորներին տարան Միքայէլեան հիւանդանոց։ Յարութիւնեանը փախել է։

◆ Յուլիսի 10-ին ոստիկանութիւնը շուրջկալի ժամանակ ձերբակալեց 27 հոգու, որոնք իրանց մօտ անցագիր չունէին։

◆ Ըստ ոստիկանական տեղեկութեան, յուլիսի 11-ին Թիֆլիսի նահանգական № 1 բանտում, բանտարկեալ Իվան Յարութիւնեանը մօտենալով՝ գաղտագողի՝ բանտարկեալ Դաւիթ Մոսաւլաշվիլիին, երբ սա պառկած էր իր սենեակում, ինչ-որ բութ գործիքով հարուած հասցրեց գլխին։ Վիրաւորվածին տարան հիւանդանոց բանտին կից, որ և ուշքի չը գալով մեռաւ։

ԿՈՎԿԱՍ

◆ «Արամազդ» նաւթարդիւնաբերական ընկերութիւնը 1914 թ. զուտ հասոյթ ունեցել է 320,000 ռուբլի. իւրաքանչիւր ակցիային դիվիդենտ է ընկնում 8 ռուբլի։

◆ Պետական Դումայի անդամներ Չխէիձէն և Սկօբելէվը, ստանալով հեռագիր այն մասին, որ Բագւում 5 հոգի դատապարտված են մահվան պատժի Բալախանիի ոստիկանապետ Պանինի սպանութեան համար, Ռօձեանկօյի միջոցով դիմել են միջնորդելով թեթեւացնել դատապարտվածների պատիժը։ Ռօձեանկօն հեռագիր ուղարկեց Կովկասի փոխարքային, իսկ Սկօբելէվը իր կողմից հեռագրեց այդ մասին կովկասեան գլխաւոր կառավարչին։

ՋԱՌԱՄԵԱԼ ԴՐՈՒԹԻՒՆԸ,

արտէրիօսկլէրօզը, յօգնածութիւնը, հիւանդութիւնների հետեւանք ընդհանուր թուլութիւնը, ալկոհոլիզմի հետեւանքները եւ այլն, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, հիծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօթէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք.

0—4

Профессоръ Д-ръ Пель и С-вья

Петроградъ.

Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

№ 2

◆ Կարսի բերդապետը կարգադրել է արգելելու բոլոր կանանց—առանց բացառութեան—մեկնել Ալէքսանդրապօլի և Սարըղամըշի միջև ընկած շրջանը։ Այդ պատճառով իսկ այն կանայք, որոնք ունեն վկայականներ ուրիշ զինւորական կառավարիչներից, պարտաւորապէս իջնում են գնացքից Ալէքսանդրապօլում և այլ ևս իրաւունք չունեն առաջ գնալ. այդ շրջանում բնակվող կանանց ուղարկել են երկու յատուկ գնացքով։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Մայրաքաղաքի թերթերում նորից լուր երևաց այն մասին, որ պետական բանկի կառավարիչ Շիպօվը հեռանում է իր պաշտօնից։

◆ Պետական Դումայի անդամների միջև միութիւն հաստատելու նպատակով կազմակերպվում է նոր ազգային-լիբերալ կուսակցութիւն Ն. Լվօվի գլխաւորութեամբ։ Նոր կուսակցութեան մէջ մտնելու են բոլոր հոկտեմբերեանները։ Ըստ լուրերի, այդ կուսակցութեան գոյութեամբ հնարաւոր է, որ պրեզիդիումի մէջ մտնէ սահմ.-ռամկավար ֆրակցիայի ներկայացուցիչը։

◆ Պետ. Դումայի անդամ Ն. Ս. Չխէիձէն հեռագրով դիմեց ներքին գործերի մինիստրին խնդրելով ընդունել նրան մերձաւոր օրերից մէկում։ Ս.-դ. պատգամաւորը մտադիր է անձամբ խօսել մինիստրի հետ այն հսկողութեան առիթով, որ կայ նրա վրա անյայտ անձերի կողմից, որոնք հետևում են նրան ամեն տեղ և նոյն իսկ ուղեկցում են նրան մինչև Տաւրիկեան պալատը։

◆ «Н. В.»-ում յօդուած է տպված այն մասին, որ ի նկատի ունենալով բարեգործական վիճակախաղերի ունեցած արտասովոր աջողութիւնը, գուցէ կառավարութիւնը բաց թողնէ 3-րդ և 4-րդ նուագներ ևս։ Սակայն, յօդուածագիրը ինչպէս ճիշդ կերպով նկատում է, անհրաժեշտ է փոխել տոմսեր ուղարկելու կարգը։ Օրինակ՝ մի ծայրագաւառ չը պէտք է ուղարկել իրար ետեւից եկող տոմսեր՝ դիցուք 17000—19000։ Այդպէս էր առաջին 2 նուագների ժամանակ, որի դէմ լսվեցին արդարացի տրտունջներ։ Հարկաւոր է ուղարկել տարբեր թւերով ու սէրիաներով տոմսեր։

◆ Ֆինանսական հարցերի քննութեան ժամանակ մինիստրը չը հրաւիրեց սոց.-դեմօկրատ և աշխատաւոր պատգամաւորներին։

◆ «Н. В.»-ի տեղեկութիւնների համաձայն, Պետական Խորհրդի նախագահ նշանակվելու է Կուլօմզինը։

◆ Յուլիսի 11-ին Պետրօգրադում ներքին գործերի մինիստր իշխ. Շչէրբատովը ընդունեց Պետրօգրադի լրագիրների ներկայացուցիչներին, որոնք ներկայացրին մի գրութիւն Պետրօգրադի մամուլի ճնշիչ դրութեան մասին և մինիստրի ուշադրութիւնը հրաւիրեցին այն հանգամանքի վրա, որ ներկայ պայմաններում մամուլը հնարաւորութիւն չունի կատարել հայրենասիրական խնդիրները, որ դրել է նրա վրա ներկայ ահարկու ժամանակը։ Իշխ. Շչէրբատովը, համաձայնելով որ մամուլը գործում է աննորմալ պայմաններում, յայտնեց, թէ առաջին հերթում դրված է զինւորական ցէնզուրան մի անձի կամ մի մարմնի մէջ կենտրոնացնելու հարցը։ Պետրօգրադի մամուլի հարցը կը քննվի մերձաւոր օրերում առանձին խորհրդակցութեան մէջ, որին ներկայ կը լինեն նաև մամուլի ներկայացուցիչները։ Իշխ. Շչէրբատովը վերին աստիճանի անցանկանալի է գտնում գործադրել տուգանքների գործադրութիւնը։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, 1 յուլիսի

Ուրմիայի ռուս զօրքերի հրամանատարն և հիւպատոսը յունիսի 27-ին այցելութիւն տուին Ուրմիոյ հայոց առաջնորդ. փոխանորդ Խորէն վ.-ին։ Այդ այցը թողեց շատ քաղցր յիշատակ իր սիրալիր բնաւորութեամբ։

Փոխ-առաջնորդը կանգնել է մի այնպիսի դժուարութեան հանդէպ, որին իսկապէս պէտք է աջակցել, քանի որ նա բարոյապէս, որքան որ կարող է, պաշտպանում է ազգային պատիւը, սակայն նիւթապէս անտանելի վիճակի մէջ է գտնվում։ Ամերիկացի միսիօներութիւնը 80.000 ռուբլու նպաստ է բաժանել Ուրմիայի քրիստոնեայ ազգաբնակութեան, և նորից շարունակում է օգնել, իսկ մեր փոխ-առաջնորդը հազարաւոր թըշուառների և մերկ ու քաղցած կին ու երեխաների լաց ու կոծին չէ կարող մի դարման գտնել, և պարտաւորված՝ դիմել է հիւպատոսից 200 ր. փոխառութիւն է արել՝ անհրաժեշտ պէտքերի համար։ Ամեն օր դիմում են Խորէն վ.-ին հարիւրաւոր խնդրատուներ և օգնութիւն են խնդրում, իսկ նա պարտաւորված է նրանց միայն յուսալի խօսքերով կերակրել։

Թէև լրագիրներից իմացվեց, որ Կովկասում կազմվել է մի նպաստամատոյց յանձնաժողով, Ատրպատականի հայոց օգնութիւն հասցնելու համար, բայց մինչև այժմ ոչ մի կոպէկ չէ հասել առաջնորդին՝ հայերին օգնելու համար։

Միւս կողմից, եղած կարգադրութեան համաձայն, Ատրպատականից գաղթողներին վերադարձնում են իրանց գաւառները, որով օրից օր աւելանում է տեղս խմբվող կարօտեալների թիւը, որոնք կողոպտված, տուն ու տեղից զրկված, մերկ ու անօթի նստել են իրանց աւերակների մոխրակոյտերի վրա, միանգամայն ենթարկված ծանր հիւանդութիւնների, և չունեն մի տեղից օգնութիւն, որ գոնէ ապրեն մի ժամանակ, մինչև որ փոխվի ներկայ վշտալի դրութիւնը, որին ենթարկվել է նոյն իսկ Ուրմիայի կարող դասակարգը, և բոլորովին անտարբեր է գտնվում այդ աղէտալի կացութեան հանդէպ։

Ուրմիան թէև Պարսկաստանի մի խուլ անկիւնն է, սակայն իր բարեբեր հողովն ու ջրովն, արդիւնաւէտ այգիներովն ու մշակութիւնովը Պարսկաստանի գեղեցիկ և շահաւէտ նահանգներից մէկն է, ուր գտնվող քրիստոնեայ ազգաբնակութեանը կարեւոր է օգնել, որ չը յուսահատեն, չը լքեն և բոլորովին չը թողնեն իրանց բնագաւառը, որոնց մեծ մասը միշտ Կովկաս է գաղթում. և երբ շուտափոյթ օգնութիւն չը լինի նրանց, նորից պիտի թափվեն Կովկասի սահմանները և ծանր բեռն լինեն կովկասահայ հասարակութեան, որը արդէն առանց այն էլ՝ ծանրածանր պարտականութիւնների և դժուարութիւնների հանդէպ է կանգնել։

Ուրեմն մնում է միայն մի կտրուկ միջոց, այն է՝ գործի հրաւիրել Կովկասում գոյութիւն ունեցող և Ատրպատականին նպաստ հայթայթող յանձնաժողովին կամ լրագրական միջոցով հանգանակութիւն բաց անել և շուտով մի կարևոր գումար հասցնել փոխ-առաջնորդ Խորէն վարդապետին։

Ուղեոր

Ժամանակաւոր խմբագիր՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 5 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Պուշկին, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.:
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՑԵԱՆ—12—1 ժ. երեկ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-Բ. ՓԻՐՋ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—117

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աֆանասևսկի Պոստիկ

գիւղի հայոց եկ.-ծխ. միդասեան ուսումնարանի համար հարկաւոր է մի փորձված ճեմարանաւարտ կամ ներսիսեանաւարտ ցէնզ ունեցող

ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ծանօթ լինի եկեղեցական երգեցողութեան, որպէս զի կարող լինի պատրաստել երգեցիկ խումբ պատարագի օրերում երգելու իր ղեկավարութեամբ։ Ռոճիկը 375 ր., սենեակ, վառելիք, լուսաւորութիւն և ճանապարհածախս՝ 15 ռուբլի։ Ցանկացողները թող շտապեն վաղօրօք յայտնել։

Մեր հասցէն՝ Черезъ Горячій Ключъ (Куб. обл., Безымянной волости), сел. Афанасьевскій Постикъ, арм. церк.-приходскому Попечительству. 465. 3—1

15 ԿՈՊԷԿ

քառ. սաժէնը, Թօխլիաուրի գիւղից 2 վ. հեռ. վրա, 2674 ֆ. ծովի մակերևոյթից բարձր, ծախվում է անտառամաս (սօսի, կաղնի, հաճարի, բոխի և այլն ծառերից բաղկացած) փայտ պատրաստելու համար։ Անտառամասի տարածութիւնն է 250 ք. սաժ.։ Ունեցած ծախքերը կը ծածկվեն պատրաստված փայտից, իսկ գետինը կը մնայ գնողին համարեա ձրի։ Ծախվում են նոյնպէս քառ. սաժ. 15 կոպ. հողամասեր, բաղկացած 900 և աւելի քառ. սաժ., ընկերական պայմաններով այգի ձգելու համար։ Հողամասն ունի առատ ջուր և գտնվում է Սագարէջօ կայար. (Կախէթեան երկ.) 5 վ. հեռ., իսկ Թօխլիաուրսկի պլատֆորմայից 2 վ. հեռ. վրա։ Կօջօրում, պօստային կայարանի մօտ, վերին խճուղու վրա ծախվում են ամարանոցի վայրեր՝ 300—1000 ք. սաժ.։ Տեղեկանալ՝ I Тумановская ул. № 13, Бухгалтерскія курсы Теръ-Степанова. 460. 10—2

ՍՈՒԽՈՒՄԻ **„Պրոմէթէյ“** Գրախանութը

յայտնում է ի գիտութիւն ծովափնեայ հայ ազգաբնակչութեանը և դպրոցական հաստատութիւններին, որ առաջիկայ ուսումնական տարվայ համար ունի հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով դասագրքեր, նաև դպրոցական ամեն տեսակի պիտոյքներ։ Դիմել՝ Сухумъ—«ПРОМЕТЕЙ». (օ. մ.) 457. 3—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

վաճառվում են հետեւեալ հրատարակութեանց սակաւաթիւ օրինակները

1) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Գր. Արծրունու գրական գործուն. 25-ամեակի առիթով, Խ. Մալումեանի,	գ. 50 կ
2) АГРАРНЫЯ ПРОБЛЕММЫ, Ал. Калантаръ,	գ. 10 կ.
3) СУДЬБА ТАБАКОВОДСТВА НА ЧЕРНОМОРСК. ПОБЕРЕЖЬѢ, Ал. Калантаръ,	գ. 15 կ.
4) ԻՆՔՆԱԿՈՉ ԻՇԽԱՆԸ, Վիլհէլմ Հաուֆի, թարգմ. օր. Վ. Տէր-Նիկողայոսեանցի,	գ. 10 կ.
5) АРМЯНСКАЯ ПОЭЗІЯ ВЪ ЛИЦѢ РАФАИЛА ПАТКАНЬЯНА, Гр. Чалхушьяна,	գ. 50 կ.
6) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդաղեանի,	գ. 05 կ.
7) ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒԽ, Վ. Լունկեվիչի,	գ. 06 կ.
8) ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Շչէդրինի, թարգմ. Խ. Մ.-ի,	գ. 05 կ.
9) ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼԼԱ, Իւհաննի Ահօյի, թարգմ. Լ. Բաբայեանի,	գ. 10 կ.
10) ՍԻՍՏԵՄ, Մ. Հալբէի, և ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ, Օ. Վիլդէի, թարգմ. Լ. Բաբայեանի,	գ. 15 կ.
11) ՀԸՐՑԷՆ, Գ. Տէր-Ռուբինեանի,	գ. 40 կ.
12) ԴԺՈԽՔ, Ե. Ջանիկեանի, II հտ.,	գ. 30 կ.
13) СѢРА, Лекція д-ра А. Арцруни,	գ. 20 կ.

Այս գրքերից մի մի օրինակ պահանջողներին զեղչ է լինում 20%, ճանապարհածախսն էլ մեզ վրա։

Դիմել՝ Ред. газеты «МШАКЪ», Тифлисъ.
(8) 0—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.